



Հոգեւոր Աստուծոյ Արեւուն ՀԱՄԱՐ
PANPÈRE "REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE"

Journal des Eglises Evangéliques Arméniennes de France
 7, Rue Papère, MARSEILLE

(Ը. Տարի) ՅՈՒՆԻՍ 1932

(8^{me} Année Juin) 1932

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական

ԵԿԵՂԵՅԻՆ
 ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ ԹԷ ԽՈՆԱՐՀԵՑՈՒՄ
 ԻՆՁՈՒ

Հոգ. Հիւանք

ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ ԹԷ ԶԱԽՈՂՈՒԹԻՒՆ
 ԱՌԱՋԻՆ ԱՒԵՏԱՐԱՆՁՈՒՀԻՆ

Ս. Գրական ուսումնասիրութիւն

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԸ
 ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՄԻՍԻՈՆ. ԳՈՐԾԸ
 ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ ԿԵՍԵՔԷՆ

Կենսագրական

ՕՊԸՐԼԻՆ

Դանկանց սիւնակ

ՏՈՒՆ ԿԵՐԹԱՅ
 ՍՈՒՐԲ ԾԱՐԱԻ

Զանազան լուրեր

Ազատ Թարգմ. Ն. Մ.
 Վեր. Մ. ՏԷՐ ՍԱՀԱԿԵԱՆ

Զ. Բ. ՊՈՒՏԱԳԵԱՆ
 ԲՐՈՖ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ
 ԹՐԳ. Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

X X X

ՍԱՄՈՒԷԼ Պ.

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը թէեւ, ֆրանսահայ Աւետարանական եկեղեցիներու պաշտօնաթերթն է, այսու ամենայնիւ, նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը կը փնտռեն եւ ծարաւը կըզգան Աստուծոյ խօսքին անխաղախ վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը անհատներու համար, այլ ամենուն, ուստի ճշմարիտ «Բան»ին ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարանաւանութիւն մը, հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ կը տպուին Մարտիի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն դուրս), որուն խմբագրական մարմինն է, **Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, ԲՐՕՓ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ** եւ Պատ. ՍԱՄՈՒԷԼ ՊԱԳԳԱԼԵԱՆ


Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ թէ հայերէնին Թարգմանութիւնը այլ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան դիւրութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կընայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխանատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՑ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որոն ղրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:



ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման 20 Ֆրանք կամ 80 Սէնթ

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա եւ Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 10 Ֆրանք կամ 40 Սէնթ

ՀԱՅԵՐԷՆ եւ ԹՈՒՐԿԵՐԷՆ միասին Ֆրանսա եւ
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման 27 Ֆրանք
կամ 1 Տօլար եւ 10 Սէնթ

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
ԲՐՕՓ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆԻ, իսկ զրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—


Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère

MARSEILLE (France)

Արթնցի՛ր դուն
որ կը յնանաս, եւ
կանգնէ մեռելն
ըն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Ե. 14

ԲԱՆԲԵՐ



Ուրեմն ա՛լ վախճանք, որ ջրլայ Թէ
Անոր Կանգիստը մանելու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Դ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Երբ. Ժ. 37

Ը. ՏԱՐԻ

ՅՈՒՆԻՍ 1932

ԹԻԻ 6

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԻՆ

Եկեղեցին... որ Անոր մարմինն է, Անոր Լու-
մը, որ կը Լեցնէ ումէնը ամէն բանի մէջ:

Եփես. Ա. 23

Որքա՛ն սխալ հասկացողութիւններ կան այս
բառին շուրջ: Մարդիկ որքա՛ն ծանծաղ կը խոր-
հին ներկայ ժամանակուան մէջ եւ շուտընդփոյթ
իրենց գաղափարները կը կազմեն ու նաեւ անոր
համաձայն կ'արտայայտուին: Մարդկային հե-
տաքրքրութիւնը կարծես կը պահանջէ ամէն
բանի մասին տեղեակ ըլլալ եւ ոեւէ խօսակցու-
թեան մը առթիւ անճարակ եւ տգէտ չերեւի:
Ուստի մարդիկ յաճախ յօդուածի մը, նոյնիսկ
խակ յօդուածի մը ընթերցումով աղօտ գաղա-
փար մը կազմելով ոեւէ նիւթի մը վրայ, հեղի-
նակաւոր անձի մը նման ալ կ'արտայայտուին:
Ժամանակի սղութիւնը, գործի շատութիւնն ու
բազմապիսութիւնը այդ վիճակին հասցուցած են
զանոնք: Դարուս հոգին մեր ազգին մէջ ալ ըն-
դարձակօրէն մուտ գտած է: Այս պատճառաւ
կ'արժէ որ մենք միտք յոգնեցնենք «Եկեղեցի»
բառին իսկական նշանակութիւնը հասկնալու,
ու քննենք թէ ի՞նչ է այն Աստուծոյ մտքին մէջ
ու անոր համաձայն:

Կարելի եղածին չափ պարզօրէն ըմբռնելի
ընելու համար երկու հարցումներու պատասխա-
նենք:

ա. Ի՞նչ է եկեղեցին եւ բ. ի՞նչ է եկեղեցին:
Արդ, ի՞նչ է եկեղեցին:

Ոմանք եկեղեցի ըսելով, միայն արտաքին
շէնք մը կը հասկնան: Կարելի եղածին չափ
բարձր դիրքի մը վրայ, գեղեցիկ ու փառաւոր
երեւութով մը, պատուհանները գեղարուեստա-
կան և գունաւոր ապակիներով, զմբէթաւոր ու աշ-
տարակաւոր, քանի մը զանգակներով, զար-

դարուած թանկագին իւղանկարներով, առատ
արծաթեայ եւ ոսկեղէն սկիհներով օժտուած, որ
մարդ վեհ ու վերացող զգացումով մը առջուն
եռանդուն ու բարեպաշտ աղօթք մը կրնայ ընել
ծնկաչոք, նոյնիսկ արցունքներով: Ասոնց համար
անարժէք են նոյնիսկ փոքր մատուռներ ու պզ-
տիկ սրահներ, որոնց մէջ յաճախ աւելի որոշ
յայտնի պիտի ընէր Աստուծոյ սուրբ ներկայու-
թիւնը քան իրենց մտքին մէջ եղած տեղերը,
այսու ամենայնիւ արտաքինը այնքան կարեւո-
րութիւն ունի իրենց համար որ չեն կրնար այդ
գաղափարէն բաժնուիլ: Այս չէ՛ եկեղեցին Աս-
տուծոյ մտքին համաձայն:

Ուրիշներ քիչ մը աւելի գեղարուեստասէր
են, ու եկեղեցին կը նկատեն որպէս գեղարուես-
տի տաճար մը թէ՛ նկարչական եւ թէ՛ երաժշ-
տական: Արդ, հոն կ'երթան վայելելու սրբազան
երաժշտութիւնը իր քաղցր մեղեդիներովն ու
ներդաշնակութիւնովը, վերանալու եւ խոր հոգե-
կան վայելք մը ունենալու: Յիրաւի եկեղեցին
գեղարուեստական բոլոր ճիւղերուն պահապան
հրեշտակն եղած է, զանոնք գնահատելով ու քա-
ջալերելով եւ զանոնք առնելով եկեղեցւոյ շրջա-
նակէն ներս, զանոնք արարողութեանց մէջ գոր-
ծածելով աստուածապաշտութեան մարդկային ձե-
ւերուն փայլ մը աւելի տալու, այսու ամենայ-
նիւ գեղարուեստը նպատակ էջ այլ միջոց եւ ե-
կեղեցին որպէս երաժշտանոց մը նկատել անար-
կու խորհուրդ մըն է, որովհետեւ եկեղեցիին նը-
պատակը շատ բարձր է ատկէ:

Ուրիշներ քիչ մը իտէալիստ են, զիտեն թէ
եկեղեցին քարերով շինուած շէնք մը չէ այլ
ընկերական կազմակերպեալ միութիւն մը: Այս
պատճառաւ անոնք շատ կարեւոր կը սեպեն վե-

րաբերիլ համայնքի մը, յարգել նախկին սովորութիւններն ու աւանդութիւնները, եկեղեցի երթալ ամուսնական պսակի, զաւակներու մկրտութեան, Ծննդեան եւ Զատիկի տօներու կամ ոեւէ ազգային տօնի առթիւ: Այս յարգանքը ինքնին արդէն աստուածապաշտութիւն նկատուելով հանդատեան կակո՛ւղ բարձ մը կ'ըլլայ, որմէ անդին մարդիկ ուրիշ բան չեն փնտռեր եւ մոլեռանդութիւն ու չափազանցութիւն կը սեպեն: Իրենք քրիստոնեայ են, եկեղեցիի մը կը վերաբերին, ուր երբեմն կը յաճախեն, ու երբ մեռնին, որպէս ջերմեռանդ հաւատացեալ քրիստոնեայ մըն ալ ներբողներ ընդունելով թաղուիլ կ'ուզեն սա գոհունակ գիտակցութիւնով թէ իրենց պարտականութիւնը լի ու լի կատարած են Աստուծոյ ու Քրիստոսի եկեղեցիին ու մարդկութեան հանդէպ: Այս միտքն ալ եկեղեցիի խորհուրդէն շատ հեռու կը մնայ:

Ուրիշներ աւելի զաղափարապաշտ են: Ասոնց մտքին համաձայն մարդ ոչ միայն եկեղեցի մը ունենալու է, այլ ամէն կիրակի կանոնաւորապէս յաճախելու է հոն քարոզ մը լսելու: Եկեղեցիին փայլը տեղը պահելու է, եկեղեցական պարտականութիւններ կանոնաւորապէս կատարելու է, եկեղեցիի ջանից կամ այրերու եղբայրակցութեան անդամ ըլլալու է, եկեղեցիներու մէջ պատրաստուած ճաշերուն մասնակցելու է, մասնախումբի մը գէթ անդամ կամ ատենապետ ըլլալու է, օգտակար ըլլալով եկեղեցւոյ արտաքին յառաջդիմութեան, այնպէս որ եկեղեցին իր ամբողջ մանրամասն կազմակերպութեամբ կատարեալ վիճակով մը օր ըստ օրէ աւելի զօրութեամբ ցոյց տայ իր գոյութիւնը: Ասոնք ալ բոլորովին կ'անտեսեն այն ճշմարտութիւնը թէ եկեղեցին մարդկային ձեռքերով շինուած ընկերական կազմակերպութիւն մը չէ:

Եկեղեցին կղերականներու գործունէութեան վայրը, կամ արարողութեանց շարքին ու պահպանման եւ յարանուանութեանց մէկին պաշտպան ուղղութիւնն ալ չէ:

Ուրեմն ի՞նչ է եկեղեցին:

Եկեղեցին մտքի երեւակայութիւնով չափուած ու ձեւուած կամ Պղատոնական խորհուրդով իտէալ կառավարութիւն մը կամ ատոր նման բան մը չէ, այլ զգայարանքներու սահմանէն գերիվեր եղող իրականութիւն մը: Աստուծոյ աշխարհի մասին ունեցած նպատակը եւ Անոր թաղաւորութիւնը եկեղեցիին մէջ իրականացած են: Եկեղեցին Աստուծոյ նոր ստեղծագործութիւնն է Հոգւով Սրբով Յիսուս Քրիստոսի միջոցաւ: Հոգին

ու Հարսը (եկեղեցին) մէկ են, սեղմօրէն իրարու յարած եւ գործակից: Ուր է եկեղեցին, հոն յայտնապէս կը գործէ Սբ. Հոգին. ուր Սբ. Հոգին կը գործէ, հոն է եկեղեցին:

Եկեղեցին անտեսանելի իրականութիւն մ'է: Անիկա զօրութիւն մը, իշխանութիւն մըն է, բայց ոչ երկրային, հապա Ս. Հոգիին անտեսանելի եւ շքեղ փառաւորութիւնով: Եկեղեցին աստուածային յայտնութեան արտայայտութիւնն է, որ Յիսուս Քրիստոսի մէջ իր գագաթնակէտը կը գտնէ: Անիկա ժամանակի ընթացքին մէջ խորհուրդներու հոլովութիւնով բարեշրջուած եւ կազմակերպուած չէ, այլ Յիսուս Քրիստոսի կեանքի գործին իբր արդիւնք երեւան եկած անհրաժեշտ իրականութիւն մը: Անոր սկիզբը եւ վախճանը, գլուխը եւ անոր կեանքը Քրիստոս է: Անիկա միակ եւ միաբան եկեղեցին է, որուն կից ուրիշ մը չկայ: Անիկա սուրբ է սուրբերու հաւատոյ միութեան եւ Սուրբ Հոգիին մշտակայ հաղորդակցութեան մէջ: Անիկա ընդհանուր առաքեալներու քարոզին (Ուրիշ մէկով փրկութիւն չկայ) վրայ հիմնուած եկեղեցին է: Ուրեմն եկեղեցին այն միակ եւ բացարձակ պատմական իրականութիւնն է երկրի վրայ, որուն մէջ բոլոր ժամանակներու եւ բոլոր երկիրներու քրիստոնեաները միացած, մէկ շունչ եւ միաբերան Տէրը կը փառաբանեն: Ամէն ժամանակի ըսինք եւ ամէն երկրի, վասնզի եկեղեցին սուրբ ժողովուրդն է բոլոր ժողովուրդներու եւ յարանուանութիւններու մէջ. սուրբ ազգ մը, ընտրուած բոլոր ազգերու մէջէն եւ անոնց մէջ: (Յովհ. Ժէ. 15): Շատ մը ազգերու եւ ժողովուրդներու մէջէն առնուած, բայց նոյն ցեղէն, վասնզի Քրիստոսի արիւնը բոլորին ալ երակներուն մէջ կը թաւալի, նոյն կեանքը բոլորին մէջ կեանք երեւան կը բերէ միեւնոյն սկզբունքն ու աղբիւրն ունենալով: Նաեւ նոյն նպատակը ստեղծուած է ամենուն միտքին մէջ — Քրիստոսը փառաւոր ընել:

Եկեղեցին կեանք է, կենդանի իրականութիւն մը: Անձ մը չէ այն մարդկային մտածելակերպին համաձայն, բայց մարդկային էութիւնը յատկանշող բոլոր յատկութիւններով օժտուած է: Եկեղեցին ունի իր իմաստութիւնը, արտայայտուած Սուրբ Հոգիէն ներշնչեալ առաքեալներու կողմէ, որոնք մարդկային խօսքերու նման մեռած բառեր չեն, հապա իրենց մէջ թաքուն կեանք եւ զօրութիւն ունին: Եկեղեցին ունի իր կամքը, որ մանրակրկիտ կերպով կը համեմատի ու կը հպատակի բարձրագոյն կամքին Քրիստոսի, որ Իր արեամբ գնած է Եկեղեցին: (Շար.)

ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ ԹԷ ԽՈՆԱՐՀԵՑՈՒՄ

Եթէ կարելի ըլլար խոնարհութեան ընդհանուր սահման մը տալ, կրնայինք ըսել թէ խոնարհութիւնը Աստուծոյ մօտութիւնն է: Աստուծոյ ամենէն մօտ բնակող անձեր ամենէն խոնարհ կ'ըլլան: Բնակող բառը մասնաւոր նպատակով մը գործածեցի: Բնակիլ կը նշանակէ տեղի մը մէջ կամ անձի մը հետ կենալ անբաժանելիօրէն: Ուստի երբ կ'ըսեմ թէ Աստուծոյ ամենէն մօտ բնակող անձեր ամենէն խոնարհ կ'ըլլան, ըսել կ'ուզեմ միշտ եւ անբաժանելիօրէն Աստուծոյ մէջ կեցող անձեր եւ ոչ թէ ատենը անգամ մը, կամ նոյնիսկ շատ յաճախ Աստուծոյ մասնաւորապէս մօտ գացողներ: Այս վերջինները կ'ուսենան շատ խոնարհեցում իսկ առաջինները՝ լուսարկութիւն: Ի՞նչ է այս երկուքին տարբերութիւնը: Խոնարհեցումը խոնարհութիւնն է: Խոնարհեցման մէջ հպարտութեան խորհուրդը կայ. հոգ մեր հպարտութիւնն է որ կը խոնարհի կամ կը խոնարհեցուի: Ճշմարիտ խոնարհութիւն ունենալու համար մարդ հպարտութեան նուազ մը անցնելու պէտքը չունի. ոչ ալ ուրիշ որեւէ մեղք մը գործելու պէտքը ունի հաւատացեալը՝ յետոյ խոնարհելու համար: Խոնարհեցումը ատեն ատեն տեղի կ'ունենայ. իսկ խոնարհութիւնը անփոփոխ եւ յարատեւ վիճակ մ'է: Երկինքի մէջ երբեք խոնարհեցում պիտի չունենանք, բայց յաւիտեան խոնարհութիւն պիտի ունենանք:

Խոնարհեցման մէջ մեր հպարտութիւնը, փառասիրութիւնը կամ ուրիշ որեւէ մեղք մըն է որ կը ստիպէ մեզ խոնարհիլ: Նշանաւոր քարոզիչ Վեր. Ֆրիլիփս Պրուքսի տղան վաղանձի առթիւ աստուածաբանութեան համալսարանէն տուն եկած էր: Երիտասարդ Պրուքս հօրմէն խնդրեց որ յաջորդ կիրակին բեմը իրեն տայ, «Շատ գեղեցիկ քարոզ մը ունէր խօսելիք»: «Լաւ», պատասխանեց հայրը, «Գալ կիրակի դուն գնա քարոզէ իմ տեղս»: Տղան նոր եռանդով մը վերստին պատրաստեց իր արդէն պատրաստած քարոզը: Ուսանողութեան շրջանին սնուցած իր երազը պիտի իրականանար. ինքը իր հօրը նշանաւոր եկեղեցւոյն բեմէն պիտի քարոզէր հսկայ բազմութեան մը: Մարդիկ վերջապէս պիտի տեսնէին թէ ինքը՝ երիտասարդ Պրուքս իր հօրը արժանաւոր զաւակն էր: Կիրակին հասաւ, եւ աստուածաբանութեան ուսանողը բեմ բարձրացաւ: Բայց հակառակ իր ակնկալածին՝ շատ խեղճ ու չիրակ քարոզ մը տուաւ. գրեթէ լեզուն կը բռնուէր: Հօրը քով վերադարձաւ շատ տրտմած

եւ ըսաւ, «Հայրիկ, այսօր շատ խոնարհած կըզգամ ինքզինքս»: Հայրը պատասխանեց, — «Չաւակա, ոչ թէ խոնարհած, հապա խոնարհեցում կ'զգաս ինքզինքդ: Դու խոնարհութեանդ աղբիւրը շնորհք չէ, հապա քու ձախողութիւնդ: Ճշմարիտ խոնարհութիւնը այն ատեն պիտի ըլլար երբ լաւ ու յաջող քարոզ մը տայիր, եւ Աստուծոյ առջեւ շնորհակալութեամբ խոնարհէիր»:

ԻՆՉՈՒ

Բոլոր շնորհաց Աստուածը... քիչ մը ատեն նեղութիւն կրելնէ՞ք ետքը, Ինք ձեզ կատարեալ ընէ: Ա. Պետ. Ե. 10

Ինչո՞ւ Տէրը երկրի վրայ քու կեանքդ տաժանելի կը դարձնէ:

— Որպէսզի երկնային սուրբ հանգիստին կարօտը քաշես (Բ. Կոր. Ե. 8):

Ինչո՞ւ Տէրը քեզի քու անարժանութիւնդ կը ցուցնէ:

— Որպէսզի ամէն մեղքէ սրբող արիւնը գնահատես (Ա. Տիմ. Ա. 15):

Ինչո՞ւ թող կուտայ որ ոտքդ գայթի:

— Որպէսզի աւելի սերտօրէն Իրեն փարիս (Յով. ԻԱ. 17):

Ինչո՞ւ քեզի աշխարհի ունայնութիւնը կըզգացնէ:

— Որպէսզի քու մխիթարութիւնդ իր մէջ փնտռես (Ա. Յովհ. Բ. 17):

Իսկ երբ քեզի այնպէս երեւի թէ Նա նոյնը չէ,

— Անպատճառ դուն ես որ փոխուած ես (Յոր. ԽԲ. 3, 5):

Ինչո՞ւ Իր երեսը քեզմէ կը ծածկէ:

— Որպէսզի զԱյն աւելի սիրով փնտռես (Սղ. ԽԲ):

Ինչո՞ւ լուռ կը կենայ աղօթքներուդ:

— Որպէսզի աւելի բարձրաձայն աղաղակես Անոր (Սաղ. ԺԳ):

Ինչո՞ւ երբեմն քեզ կը լքէ:

— Որպէսզի չըլլայ թէ դուն զԻնքը լքես (Յակ. Ա. 13, 12):

Անոր սէրը բնաւ չտկարանար: Անոր բոլոր ճամբաները Իր սիրոյն յորձանքն են՝ որուն աւիքները յորդառատ են ու կը յորդին:



ՀՈԳ. ԿԵԱՆՔ

ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆ ԹԷ ՉԱԽՈՂՈՒԹԻՒՆ

Բոլոր աւետարանիչներուն մէջէն՝ որոնց ծանօթանալու առանձնաշնորհումը վայելած են, քիչեր միայն ազդած են ինծի այնքան որքան յանգուցեալ Տր. Չէփմէն: Անոնք որ անոր ուկնդրելու ուրախութիւնն ունեցած են, երբեք պիտի չի մոռնան անոր մեղաւորներու ուղղած յանկուցիչ աղերսանքը եւ անոր շրթունքներէն հոսած շքեւոր հալի խօսքերը:

Սակայն Տր. Չէփմէն միշտ այդպէս եղած չէր: Անիկա երբեք չէր յոգներ պատմել թէ ինչպէս հարուստ եկեղեցիի մը մէջ անյաշող կերպով պաշտօնավարած միջոցին հասած էր ճգնաժամի մը: Ծիշող այն ժամանակ որ իր համբաւին զազաթնակէտին վրայ կը գտնուէր, Մր. Մուտի անոր այցելութեան գնաց, բայց ոչ իբրեւ աւետարանիչ, այլ իբրեւ ունկնդիր:

Ի՞նչ ստուար բազմութիւն, ի՞նչ քարոզութիւն: Ի՞նչ բարեսիրական զործունէութիւն: Ի՞նչ խանդավառութիւն: Զարմանալի չէր որ Տր. Չէփմէն հպարտ կ'զգար իր դիրքին վրայ. իրաւունք ունէր այնպէս զգալու: Բայց Մր. Մուտի բոլորովին հանդարտ կ'երեւնար. կարծես թէ անոր փայլուն դիրքը տեւէ ազդեցութիւն չէր դնել իր վրայ:

Այն հիանալի օրուան իրիկունը Մր. Մուտի մեծ փափկութեամբ իր ձեռքը Տր. Չէփմէնի ուսին վրայ դնելով ըսաւ, «Դուն գիտե՞ս թէ քու զործող ձախողութիւն մըն է հոս: Մեծ սխալ մը կայ քու պաշտօնավարութեանդ մէջ: Քու քարոզութիւնովդ հոգիներ չես շահիր: Այս ամէնը կ'ըսեմ քեզի եղբայրական կատարեալ սիրով»: Սիրով: Ո՞ր է: Ո՞ր մէկ եկեղեցին կրնար մրցիլ կամ նոյնիսկ բաղդատուիլ իր եկեղեցիին հետ: Մի՞թէ իր եկեղեցին ամէն մարդու կողմէ սքանչելի յաջողութիւն մը չէր նկատուեր:

Մուտիի յանդիմանութիւնը խորապէս փրաւորեց զայն եւ անիկա օրերով ու շաբաթներով զգաց այդ յանդիմանութեան առթած կակիծը, սակայն իր սրտին խորերէն գիտէր թէ իր պաշտօնավարութեան վերջին հինգ տարիներուն միջոցին Աստուած ցուցուցած էր իրեն իր մեծ զօրութիւնը եւ ակնարկած էր իրեն թէ ինչե՞ր կրնար ընել՝ եթէ միայն թոյլ տար որ Ս. Հոգին գինք լեցնէր:

Այսպէս հինգ տարի ինքզինքը յաջողութեան զազաթնակէտին հասած նկատելով իսկ Աստուծոյ դէմ պայքարած էր, մինչեւ որ Մուտի գալով քաջութիւն ունեցած էր իր մատը դնել յաջողութիւն կոչուած վիճակին վրայ՝ զայն հանդարտօրէն «Ձախողութիւն» անուանելով: «Քու զործող բան մը չնշանակեր»:

Ձախողութիւն: Այո, շիտակ էր: Իր սքանչելի ճարտասանութեամբ Չէփմէն ժողովուրդի փայլուն բազմութիւն մը գրաւած էր ամէն կողմէ: Մարդիկ ուրիշ եկեղեցիներ թողելով իր եկեղեցին կը խոնուէին, սակայն Բրիստօսի չէին գար եւ իր եկեղեցիին անդամները ինքզինքնին ամբողջովին Աստուծոյ չէին նուիրեր ու յանձնէր:

Ձախողութիւն: Վերջապէս յաջողութեան զազաթնակէտին վրայ գտնուող այս երէցը Աստուծոյ առջեւ փշուրեցաւ եւ խոստովանեցաւ իր փառասիրութիւնը ու . . . «Ձախողութիւնը»: Աստուած անոր ցուցուց թէ ինչպէս ինք սիրած էր իր անձին անգործութիւնը եւ թէ ինչպէս իր ընտանիքին սէրը աւելի մեծ տեղ մը բռնած էր իր սրտին մէջ քան թէ Աստուծոյ սէրը: Վերջապէս Տր. Չէփմէն իր կամքը Աստուծոյ յանձնեց:

Անիկա կ'ըսէր, «1892 Հոկ. 16ին, հասայ այն կէտին որ կարող եղայ ըսելու, Ով Աստուած, ես յօժար եմ որ զիս ամէն բանի յօժարեցնես: Եւ Աստուած անմիջապէս վերէն զօրութեամբ լեցուց զայն: Անոր խոստովանութիւնը շատ յուզիչ է: Կ'ըսէ թէ իր մէջ տեղի ունեցած փոփոխութիւնը գրեթէ աննկարագրելի էր: «Այս կէտին չհասած երբեք չէի գիտեր թէ ինչ ըսել էր ընտանիք» սիրել, ոչ ալ կը խորհիմ թէ անոնք գիտէին թէ ինչ ըսել էր զիս սիրել, հակառակ անոր որ զմեզ միշտ երջանիկ նկատած էինք մեր փոխադարձ սիրոյն մէջ: Ես երբեք չէի գիտեր թէ ինչ ըսել էր Սուրբ Գիրքը ուսանիլ եւ ինչո՞ւ պիտի գիտնայի, չէ՞ որ նոր գտած էի զայն ուսանելու բանալին: Երբեք չէի գիտեր քարոզել: Իմ քրիստոնէական փորձառութեանս մէջ հին բաները անցած էին եւ ամէն բան նոր եղած էր: Ու եթէ իմ պաշտօնավարութիւնս երբեք օգտակար եղած է, եթէ երբեք կարող եղած եմ հոգիներ շահիլ, գիտեմ թէ այդ փոփոխութիւնը ե՛րբ տեղի ունեցած է իմ կեանքիս մէջ»:

Տր. Թօրրի որ նմանապէս զարմանալի կերպով օրհնուած պաշտօնավարութիւն մը ունեցած է, նոյնպէս կը պատմէ: Անիկա ալ իր հիանալի տաղանդներով ամէն կողմէ յաջողութիւն մը կը նկատուէր եւ իր յաջողութեան գիտակից եւ ու-

րախ էր: Օր մը սակայն առաջնորդուեցաւ իրեն բնաբան ընտրելու Մատթ. Գ. 11, «Անիկա ձեզ Սուրբ Հոգիով ու կրակով պիտի մկրտէ»: Իր սովորութեան համեմատ ծունկի եկաւ Աստուծոյ ներշնչում եւ առաջնորդութիւն խնդրելու: Բայց Սուրբ Հոգին իրեն խօսեցաւ իր անձին նկատմամբ: Ուստի իր խնդրուածքը փոխելով աղաղակեց, «Ով Աստուած, ես չեմ հաւատար թէ այս պարգեւը ունիմ: Ես երբեք մկրտուած չեմ Սբ. Հոգիով ու կրակով: Ինչպէ՞ս կրնամ լրջօրէն քարոզել այս բնաբանին շուրջ առանց զայն ունենալու: Հիմա տուր ինձի զԱյն որու մասին պիտի քարոզեմ: Թող որ ունենամ այս գործնական փորձառութիւնը, որպէսզի կարենամ վաղը պէտք եղածին պէս քարոզել: Ի՞նչ եղաւ անոր աղօթքին հետեանքը: Աստուած ինքզինքը անոր յայտնեց եւ Տր. Թորրի կ'ըսէ, «Ես ինքզինքս տեսայ ունայնամտութեամբ, հպարտութեամբ եւ անձնասիրութեամբ լեցուն»:

Կ'ըսէ նաեւ թէ այդ յայտնութիւնը խիստ կսկծեցուցիչ բայց նաեւ առողջարար էր: Աստուած միայն ցաւ հպատճառեց, հապա ինքզինքը փառաւորապէս անոր յայտնելով զայն սրբեց: Տր. Թորրի այս փորձառութիւնը շատ տարիներ առաջ տեղի ունեցաւ, սակայն կրակը երբեք չի մարեցաւ ու մորենին բնաւ չսպառեցաւ: Մարդոցմէ յաջող նկատուած այս երէցը ինքզինքը բողոքովին Աստուծոյ յանձնելով Անկէ ալ յաջող նկատուեցաւ:

Մր. Մուտի փորձառութիւնն ալ ասոր նման էր: Երբ օր մը քանի մը հաւատացեալ տիկիններ իրեն ըսին թէ իրեն համար կ'աղօթէին որ Սուրբ Հոգիով լեցուէր, քիչ մը նեղարտած պատասխանեց, «Ինձի համար ինչո՞ւ կ'աղօթէք: Ինչո՞ւ ժողովուրդին համար չէք աղօթէք»: Անիկա գիտէր թէ ինք յաջող քարոզիչ մըն էր: 25^օ որ բազմութեամբ իրեն ունկնդրելու կուգային: 25^օ որ մարդիկ կ'աղաղակէին, «Ի՞նչ պէտք է ընել որ փրկուիմ»:

Սակայն պատկանելի եւ սուրբ Աստուծոյ գաւակ մը օր մը անոր ազդու քարոզներէն մէկին մտիկ ընելէ վերջ անոր ըսաւ, «Մուտի, աշխարհ տակաւին տեսնելու է թէ Աստուած ինչե՞ր կարող է ընել ամբողջովին իրեն նուիրուած մարդու մը մէջ եւ անոր միջոցաւ»: Այս գիտողութիւնը Մուտին յանկարծակիի բերաւ եւ զայն զրեթէ սարսափեցուց եւ դողացուց, բայց երբ անիկա սկսաւ մտածել այս խօսքին վրայ, կրակը սկսաւ բռնկիլ:

Աստուած անոր ցուցուց իր նուիրման պակասը: Մուտի ինքզինքը ամբողջութեամբ դրաւ սեղանին վրայ եւ կրակին սպասելու պէտք չունեցաւ: Եւ ո՞վ կրնայ հաշուել, ո՞ր լեզուն կրնայ պատմել այն հրաշքները զոր Աստուած գործեց այս մարդուն միջոցով որ մեզմէ շատերուս վայելած կրթութեան առաւելութեան մէկ տասնորոգն անգամ ստացած չէր:

Մարդկային տեսակէտով զրեթէ չենք կրնար զարմանալ որ 25 միլիոն, Թորրի եւ Մուտի նման հսկաներ ինքզինքնին յաջող կը նկատէին: Զարմանալի է սակայն որ քրիստոնեաներուն զրեթէ ստուար մեծամասնութիւնը բողոքովին զոհ կ'երեւի իր հոգեւոր վիճակէն եւ երջանիկ՝ իր կատարած գործին համար:

Քրիստոնեայ գործիչներ, ըլլան կղերական կամ աշխարհական, ուրախութեամբ կը շարունակեն իրենց գործը առանց որոշ արդիւնք մը տեսնելու կամ յաճախ նոյն խնդիրներու: Կիրակնօրեայ դպրոցի ուսուցիչներ եւ Սբ. Գիրքի ուսուցման առաջնորդներ ընդհանրապէս երբեք զաղափար չունին թէ իրենց աշակերտները ուր կը գտնուին հոգեւորապէս: Շատերու հանդիպած եմ որոնք խոստովանած են թէ իրենք ամիսներ եւ տարիներ Կիրակնօրեայ դպրոցի ուսուցչութիւն ընելէ վերջ դարձի եկած են: Անտարակոյս անոնց երէցները կը խորհէին թէ անոնք վերստին ծնած անհասներ էին: Շատ անգամ այնպէս կ'երեւի թէ ոչ մէկին հոգն է որ մեր երգիչներէն, ժամկոչներէն եւ եկեղեցական ուրիշ պաշտօնեաներէն շատերը դարձի որեւէ նշոյլ չեն ցուցներ ու յաճախ կը բացակային Աւետարանչական ժողովներէ:

Ամէն տեղ բնական ընթացք մը կ'երեւնայ որ մեր Կիրակնօրեայ դպրոցները ալ յետոյ աշակերտներուն մեծ մասը՝ դպրոցէն հեռանալուն պէս՝ կրօնական ամէն տեսակ կազմակերպութիւններէ կը հրաժարին: Բայց խիստ հազուադէպ է որ եկեղեցիի մը անդամները այս կարգի կէտերու շուրջ անհանգիստ ըլլան կամ ձախողութեան նշոյլ մը դրան:

Այս խնդիրները նկատողութեան առնելու համար առաջնորդ քրիստոնէական գործիչներու ժողով մը գումարուեցաւ ժամանակ մը առաջ: Նախագահը մեծ սիրով ներկայացուց խնդիրը, մատնանի ընելով յաջողութեան, եռանդի եւ զօրութեան պակասը եւ վերէն զօրութեան պէտքը: Երէցներէն մին որ աւետարանիչ մըն էր, քիչ մը խոթողովով պատասխանեց, «Զեմ գիտեր թէ ինչո՞ւ այդպէս կը խօսիք, մենք սխալ բան

մը չենք ընէր: Մեզմէ աւելի նուիրուած եւ անխոնջ աշխատող այրերու եւ կիներու խմբակ մը որեւէ ուրիշ տեղ չէք կրնար գտնել:

Այս դիտողութիւնը ընողին ձայնին շեշտէն իսկ կը յայտնուէր անոր դիրքը: Անիկա ըսել կ'ուզէր, «Մեր գործը յաջող է, հաւանաբար աւելի լաւը կրնայինք ընել, բայց ամէն պարագայի տակ ձախողած չենք»: Արդեօք եկեղեցիները երթալով աւելի չե՞ն դիմեր աշխարհի օգնութեան եւայդ կերպով իրենց յաջողութիւնը ապահովցնել:

Մեծ պահքի մը միջոցին մէկը հրաւիրուած էր խօսելու եկեղեցիի մը մէջ որ մեծ ժողովուրդականութիւն կը վայելէր: Ըստ սովորականին ժողովուրդը մինչեւ դռները խոնուած էր: Երգեցողութիւնը սքանչելի էր: Ամէն կողմ երիտասարդ ղէմքեր կ'երեւէին: Ընկերական ու բարեկամական հոգի մը կը նշմարուէր ամէն կողմ: Ծանուցումները կը ցուցնէին մեծ ու ծաղկեալ կազմակերպութիւն մը որ կ'զբաղէր քարտախաղերով, պարերով, նուագահանդէսներով եւ ներկայացումներով, որոնց համար կրնային տոմսեր գնուիլ այդ երեկոյին եկեղեցիին դռներուն առջեւ: Երէցը եւ իր գործակիցները շատ ուրախ կ'երեւէին եւ գոհ՝ իրենց եկեղեցիին ծաղկեալ վիճակէն: «Մենք յաջող ենք» կ'արտացոլային անոնց ղէմքերը, մինչ ճշմարտութիւնը այն էր, որ այս եկեղեցիին նկատմամբ ալ կարելի էր զրել ինչ որ գրուած է ուրիշ եկեղեցիի մը մասին, «Կ'ըսես, ես հարուստ եմ ու մեծցայ, և բանի մը կարօտ չեմ, ու չես գիտեր որ դուն խեղճ ու թշուառական ես, եւ աղքատ ու կոյր ու մերկ» (Յայտ. Գ. 17): Ո՛րչափ դիւրին կը խառուինք մենք:

(Շար.)

ԱՌԱՋԻՆ ԱԻԵՏԱՐԱՆՉՈՒՆՆԻՆ

Աշխարհային բիւր վայելքներ
Եւ մարմնաւոր սին հաճոյքներ,
Ալ չեն լեցներ սիրտըս թափուր
Եւ ամոքեր հոգիս տխուր:
Ո՛հ, ի՞նչ ընեմ, ալ ո՛ւր դիմեմ
Որ խոր վիշտըս ես փարատեմ:

Ազգականներ, բարեկամներ
Եւ իմ մարմնի խնկարկուններ,
Բոլոր ասոնք մեծ կամ պզտիկ
Ալ չեմ զգար սրտիս մօտիկ:
Ո՛հ, ի՞նչ ընեմ, ալ ո՛ւր դիմեմ
Որ խոր վիշտըս ես փարատեմ:

Հայրենիքիս լեռներ, ձորեր
Կանանչազարդ սիրուն դաշտեր
Եւ պուրակներ թաւ ու մթին
Չունին հրապոյր ալ իմ աչքին:
Ո՛հ, ի՞նչ ընեմ, ալ ո՛ւր դիմեմ
Որ խոր վիշտըս ես փարատեմ:

* * *

Ո՛վ տխրաղէմ դու հէք հոգի,
Ո՛վ մեղսալից դուն խեղճ դերի,
Առ քու սափոր, վազէ ջրհոր
Զի հոն կուգայ աւետաւոր
Մէկ երկնային սուրբ Ուղեւոր,
Փարատելու վիշտըդ բոլոր:

Նա Մեսիան է աստուածային,
Որ լքելով փառքն երկնային՝
Այժմ կուգայ ջրհորին քով
Որ ջուր խնդրէ քեզմէ սիրով:
Մի տատամսիւր, աճապարէ
Որ հոն երկար քեզ չըսպասէ:

Նա յողնած է եւ ծարաւի,
Ծարաւ հոգւոյ, ծարաւ սրտի.
Հուր արեւը գլխի վերեւ
Կիզիչ աւազն ոտից ներքեւ,
Նա կտրած է երկար ճամբայ
Արագ քայլով որ չուշանայ:

Անոր աչքէն խորաթափանց
Պիտ՝ չկրնաս ծածկել քու անձ,
Նա քու գործած մեղքերդ անլուր,
Պիտ՝ ցուցնէ քեզ սիրով բոլոր,
Փոխան ջրի անմահական,
Պիտ՝ քեզ ջուր տայ անմահական:

* * *

Սամարացիս ոտքով թեթեւ,
Անգիտակից ձայնին թէեւ,
Սովորական ճամբան բռնած
Շուտով հոսնի ջրհորն յողնած,
Ուր նա տեսնէ իրաւցընէ
Մեծ Ուղեւորն որ սպասէ:

Ուղեւորի խոնարհութիւն
Քաղցր ու վսեմ խօսակցութիւն,
Յեղաշրջեն ամբողջովին
Կնոջ հոգին, անձը ներքին,
Նա ընդունի նոր տեսութիւն,
Աստուածային նոր յայտնութիւն:

Արտասուալից կիսն այժմ իսկոյն
Խոստովանի ախտերն հոգւոյն,

Դաւանելով Նազովրեցին
Որպէս Մեսիան աստուածային,
Իսկոյն ցնդի ցաւերն բոլոր
Եւ անհետի վիշտն ահաւոր:

Փոխուած կեանքով, ուրախ սրտով,
Թողլով սափորն ջրհորին քով,
Այժմ նա փութայ վազել իր գիւղ
Աւետելու հիւղէ ի հիւղ,
Դալուստը մեծ Մարգարէին
Եւ փրկութիւն մեղաւորին:

Փարիզ (Վեր.) Մ. ՏէՐ ՍԱՀԱԿԱՆ

Ս. ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԸ

Հին ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ձեռագիրները:—

Հին Կտակարանին ձեռագիրները մեզի հասած են Մասորեանց միջոցաւ: Մասորա (աւանդութիւն) կը բաղկանայ Սուրբ Գրոց բնագրի քննական տեղեկութիւններէն որոնք նախ բերանացի եւ ապա զրաւոր պահուած են: Ըստ հեղինակաւոր գիտնականներու կարծիքին, Հ. Կրտակարանին ամենահին ձեռագիրը Յ. Տ. 916 թրւականէն է: Գտնուած Օտեսայի մէջ եւ պահուած Սբ. Բեթըրպուրկի թանգարանը: Արդ քննենք թէ մինչեւ մեզի ծանօթ այս հնագոյն ձեռագիրը, բնագիրները ինչ փուլերէ անցան սկիզբէն ի վեր: Զանազան շրջաններու կարելի է բաժնել այս պատմութիւնը:

Ա. Նախնական ձեռագիրներէն մինչեւ Կանոնին կազմութիւնը: Այս շրջանը գիրքերու նախնական կազմութեան շրջանն է: Գիտենք թէ կը գրէին մեջանով, պատրաստուած մորթերու վրայ եւ աւելի ուշ՝ պապիրոսի եւ մագաղաթի վրայ: Գրուած թերթերը կ'որոտէին փաթոյթ մը կազմելու համար: Գործածուած գիրը նոյնը չէր ինչ որ վերջը գործածուեցաւ այս բնագիրներուն ընդօրինակութեանը համար, եւ զորս կը գտնենք արդի եբրայեցերէն Ս. Գրոց մէջ: Այն ատեն կը գործածուէր հին Փիւնիկեան գրութիւնը, զոր Հրեայք կ'անուանէին «Կոտրատուած գիր»: Կրնայ ըլլալ որ այն ատեն իսկ բառերը կէտերով բաժնուած ըլլային ինչպէս կ'երեւի Սամարացոց Հնգամատեանին մէջ, (Ն. Ք. Տրդ դար): Բառերը իրարու ետեւէ գրուած էին առանց բաժանման,

առանց զլխու եւ համարներու. միայն բանաստեղծական կտորներն էին որ քիչ մը կը զանազանուէին իրենց կազմութեան պատճառաւ իսկ: Միմիայն բաղաձայն գիրերը կը գրուէին, արաբական զրականութեան մէջ մեզի ծանօթ կերպով:

Բնականաբար սկիզբէն Կանոնական ձեռագիրներու վայելած արտակարգ հոգածութիւնը չի տարուեցաւ ասոնց, այս պատճառաւ ալ ընդօրինակիչներու կողմէ կարգ մը սխալներ սպըրգեցան ձեռագիրներուն մէջ թիւերու, յատուկ անուններու, գիրքերու եւ երբեմն բառերու ու նախադասութիւններու մէջ իսկ: Ասոնք կարգի դնելու համար մեծ աշխատութիւններ թափուեցան յաջորդական շրջաններուն մէջ:

Բ. Կանոնական ձեռագիրներէն մինչեւ մասսորեանք: Այս շրջանը կ'իյնայ Կանոնին փակուելէն մինչեւ 4րդ դար յամի Տեառն: Կարեւոր իրողութիւն մը զոր պարտինք յիշել, այս շրջանին մէջ մեր յիշած Փիւնիկեան գիրերու Արամերէն կամ քառակուսի գիրերու փոխուիլն է: Այս փոփոխութիւնը հետզհետէ կատարուեցաւ գերութենէ վերագարծին յաջորդող տարիներու ընթացքին: Յիսուսի ժամանակ քառակուսի գիրերը ընդհանրացած էին, ատոր ապացոյցը ունինք Յիսուսի խօսքին մէջ, «Օրէնքէն յովտ մը կամ նշանագիր մը պիտի չանցնի» (Մատ. Ե. 18): Այստեղ «Յովտ»ը յունարէն թարգմանութիւնն է եբրայեցերէն կամ արամերէն «Եօտ»ին: Յիսուս ըսել կ'ուզէ թէ բոլոր օրէնքը պիտի մնայ մինչև իր ամենափոքրիկ գիրը: Արդ Քառակուսի գիրերուն եւ ո՛չ թէ նախկին գրութեան մէջ է որ «Եօտ»ը ամենէն պզտիկ գիրն է: (1)

Կանոնին փակումը բնականաբար պահանջեց որ վաւերական ձեռագիր մը հաստատուի: Դպիրները այսպէս է որ մղուեցան իրենց լուրջ աշխատանքին, կազմելու համար պաշտօնական ձեռագիրը: Քանի որ բազմազան ձեռագիրներ ունէին իրենց ձեռքերուն մէջ որոնք բաւական կը տարբերէին իրարմէ, անոնք մեծ խնամքով միջին ձեռագիր մը ընտրեցին, տարբեր ձեռագիրները գիրար լրացնելու համար գործածելով: Յետ այնու ամենամեծ խնամք տարուեցաւ պաշտօնական ձեռագրին պահպանութեան եւ ընդօրինակութեան: Ընդօրինակիչները գրելէ առաջ պարտէին նախ բառը արտասանել: Աստուծոյ մէկ անուան հանդիպած ժամանակ ամփոփուիլ երկիւղած յարգանքով եւ ապա զայն գրել գրիչը

(1) Bible Annotée 1889 Les Livres Historiques Vol I էջ 38:

որքելէ յետոյ: Երբ հանդիպէին Եհովա անպատմելի անուան զորս երբեք չէին արտասաներ, դպիրը պարտաւոր էր իր բոլոր մարմինը լուալ: Գործածուած մեղանը ըլլալու էր սեւ, մաքուր եւ մասնաւոր պատրաստուած: Մագաղաթները կը պատրաստուէին Իսրայելացիի մը ձեռքով մաքուր կենդանիի մը մօրթէ: Ընդօրինակութեան լրանալուն անմիջապէս յաջորդող 13 օրերու ընթացքին օրինակը խիստ քննութեանէ մը կ'անցնէր: Ոմանք մէկ սխալի համար իսկ ձեռագիրը անպէտ կը նկատէին, ուրիշներ թոյլ կուտային մինչեւ երեք սխալի սրբագրութիւն, եթէ ուրիշ վրիպումներ ալ պատահած ըլլային, ձեռագիրը անպիտան եւ անսուրբ կը հռչակուէր: Բայց Պաղեստինեան եւ Բաբելոնի դպիրներուն բաղաձայներու վրայ կատարած այս աշխատութիւնները բաւական չէին: Նկատելով որ պաշտամունքի միջոցին գործածուած երբայերէնը այլեւս խօսուած լեզուն չէր, վտանգ կար որ բաղաձայներուն միջեւ կարգացուէին ձայնաւորներ որոնք չէին համապատասխաներ իրական գիրին, հետեւաբար վտանգ կար որ շատ բառեր փոխէին իրենց իմաստը: Ուստի պէտք տեսնուեցաւ իրական հնչումը որոշել, զոր ըրին երկար աշխատութիւններով առանց սակայն զայն զրելու ձեռագիրներուն մէջ: Ապա օրինաց, մարդարէից, պատմական գիրքերուն համար ալ մասնաւոր բաժանումներ կատարուեցան որ նոյնպէս տակաւին չի գրուեցաւ ձեռագիրներուն մէջ:

Գ. Մասօրական շրջանը, (Յ. Տ. Ե-Ժրդ դար): Մասօրականք նոր գործ մը չէ որ ըրին, այլ շարունակեցին դպիրներուն սկսածը: Անոնք բերանացի գրութիւնները գրաւորի վերածեցին, մասնաւոր կերպով հնարեցին ձայնանշաններ որոնք թէ կետագրութեան, թէ ձայնաւորներու եւ թէ առողանութեան նշաններու դեր կը կատարէին: Անոնք նաեւ նօթագրեցին լուսանցքին մէջ ձեռագրաց պարունակութեան վերաբերող դիտողութիւններ: Կը համրէին թէ Սուրբ Գրոց մէջ իւրաքանչիւր գիր քանի՞ անգամ գործածուած էր: Այսպէս ալէֆը գործածուած է 42,377 անգամ, պէթը 38,248 անգամ: Հին Կտակարանի բոլոր գիրքերուն համագումարն է 845,280: Այս հաշիւներուն նպատակն էր գրելու յաւելումին կամ հանումին առաջը առնել: Ապա կը հաշուընէր թէ իւրաքանչիւր բառ կամ ասացուածք քանի՞ անգամ կը պատահի: Եթէ մէկ անգամ՝ սինակը կը ծանուցուէր, «Ուրիշ չկայ»: Եթէ քանիցս գործածուած է, կը նշանակուէր «3, 4 կամ հինգ անգամ գործածուած» եւն: Այսպիսի զարմանալի

հնարքներու կը դիմէին համրելով իւրաքանչիւր գիրքի եւ բաժանման գիրքերը, բառերը, կեդրոնական բառերը, կեդրոնական գիրքերը եւն: Եթէ որեւէ ակներե սխալ ըլլար, կ'զգուշանային բուն ձեռագիրը սրբագրելէ եւ ուղիղ կը նշանակէին լուսանցքին մէջ:

Մասօրեանք կը բաժնուէին երկու դպրոցներու. մին Պաղեստին, միւսը Բաբելոն, ի վերջոյ Պաղեստինի դպրոցը յաղթանակեց շնորհիւ իր լաւագոյն կէտագրութեան: Մասօրեանք նախկին բաժանումները պահելով հանդերձ Հին Կտակարանը 146 մասերու բաժնեցին: Գիշ յետոյ աւելցուցին նաեւ տարւոյն շաբաթներուն համապատասխանող նոր բաժանումներ: ԺԱ. դարուն Մասօրեանց գործը արդէն աւարտած է եւ Հին Կտակարանի ձեռագիրը վաւերացուած, գրեթէ մեր ունեցածին պէս: ԺԳ դարուն էր որ զուլաներու բաժանումը Կարտինալ Հիւկօի կողմանէ կատարուեցաւ Լատիններէն թարգմանութեան մէջ, ու անկից ալ մտաւ երբայական ձեռագիրներուն մէջ:

Դ. Մասօրեանց վախճանումէն մինչեւ տպագրութիւն: Արդի երբայերէն ձեռագիրները երկու դասակարգի կը բաժնուին: Անոնք որ մաս կը կազմեն սինակոկին գրքերուն եւ կը պարունակեն միայն բաղաձայն գիրքերը եւ ուրիշներ՝ որ բաղաձայններէն զուրս ունին նաեւ մեր յիշած ձայնագիրները: Ասոնց երկուքին մէջ ալ ընդօրինակութեան վրիպումներ սպրդած են: «Առաջին անգամ 1477ին Bologneի մէջ տպուեցաւ երբայերէն սաղմոսները հրեայ գիտունի մը մեկնութեամբ միասին: 1488ին Soncino (Lombardy) մէջ երեցաւ Հին Կտակարանի ամբողջական տպագրութիւնը, որուն երկրորդ տպագրութիւնը տպուեցաւ 1494ին Bresciaի մէջ, եւ այս է զոր Լուտեր գործածեց իր գերմաներէն թարգմանութեան համար: 1517ին եւ 1525ին վենետիկի մէջ տպուեցաւ Bombergի ռաբունական թարգմանութիւնը ուր կը պարունակէր նաեւ ռաբիններու նօթագրութիւնները, իսկ նոյն տարեներն ալ 1514-1517 Կարտինալ Ximenès Սպանիոյ մէջ կը հրատարակէր իր մեծ Polyglotte d'Alcala կամ Complutensisը եւ այս վերջին երկուքն են որ իբր հիմ ծառայած են թարգմանութեան» (Bible Annotée Vol I էջ 40):

Ինչպէս կը տեսնուի, մեր ձեռագիրները երկար եւ զանազան շրջաններէ անցած են: Լեզուագիտական եւ հնախօսական նուաճումները հետզհետէ թոյլ կուտան բանիբուն քննադատներու շարունակաբար սրբագրելու ձեռագիրներու վրի-

պահները, այնպէս որ այսօրուան մեր ձեռքը ունեցած Ս. Գիրքերը շատ տարբեր չեն կորսուած իսկական բնագիրներէն և հաւատարմօրէն մեզի կը բերեն ներշնչեալ հեղինակներու պատգամը: Արդ, մեզի ծանօթ Սուրբ Գիրքը հիմնուած է հազարաւոր եբրայերէն եւ յունարէն ձեռագիրներու վրայ: Ո՞վ գիտէ ի՞նչ պիտի պատահէր եթէ մեր ձեռքը ունենայինք իսկական բնագիրները Մովսէսի, Դաւիթի եւ մարգարէներուն ձեռքով զըրւած: Անտարակոյս Աստուած խնայած է մարդոց, զի հաւանաբար ներշնչեալ ձեռագիրները շատերու պաշտամունքին առարկայ պիտի դառնային: Պղնձէ օձը մեծ օրհնութիւն եւ ազատութեան միջոց եղաւ Իսրայէլի՝ ընդդէմ կիզող օձերու: Սակայն ժամանակ մը յետոյ Իսրայէլի որդիները իրենց պաշտամունքին առարկայ ըրին և խունկ կը ծխէին անոր, ուստի Եզեկիա թագաւորը կը տոր կտոր ըրաւ զայն նէսութեան կոչելով. Դ. Թագ. ԺԸ. 4: Ինչպէս մարդուն սիրտը նոյնպէս ալ այս մտայնութիւնը չէ փոխուած մինչեւ մեր օրերուն: Թողունք կռապաշտները, բայց միթէ լուսաւորեալ ազգերու զաւակներուն մէջ հազարաւորներ չկա՞ն որոնք նախապաշարեալ հաւատքով մը և երկիւղած յարգանքով կը մօտենան պատկերներու, ինչպէս նաեւ փայտի, քարի, մետաղի կարծեցեալ մասունքներու: Եթէ աւանդութեան զօրութեան վրայ այսքան յարգ եւ արժէք կը տրուի, մարդիկ ինչէ՞ր չպիտի ընէին ներշնչեալ գրոց...: Աստուած մեծ խնամքով հոգ տարաւ որ Իր յայտնութիւնը անվթար մեր ձեռքը հասնի, բայց կարծեմ թէ Մովսէսի մարմնոյն նման պահեց բնագիրները որպէսզի մարդ չգտնէ զանոնք:

Փարիզ

Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱՆԻ ՄԻՍԻՈՆ. ԳՈՐԾԸ

Բ. ՀՐԱՇԱՆԻ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

4. Աղօթք: Պօղոսի միսիոնարական գործի յաջողութեան ուրիշ մէկ գաղտնիքն է աղօթքը: Այդ խողովակին միջոցով էր որ անիկա միացած էր աստուածային անսպառ ոյժի աղբիւրին, որու նկատմամբ լսեցինք «Բանբեր»ի նախորդ թիւոյն մէջ: Ոեւէ մարդէ աւելի նա օգտուած է Յիսուսի սա խոստումէն, «Ան որ ինծի կը հաւատայ, այն գործերը որ ես կը գործեմ, ինքն ալ պիտի գործէ, վասնզի ես Հօրս քով կ'երթամ, եւ Իմ անունովս ինչ որ խնդրէք, պիտի կատարեմ զանիկա, որպէսզի Հայրը Որդիովը փառաւորուի» (Յովհ. ԺԴ. 12, 13): Այս խօսքէն քաջաւերուած,

Պօղոս աղօթքի մէջ էր անդադար (Հռով. ԺԲ. 12 Ա. Թես. Ե. 17): Կ'աղօթէր, երբ պէսպիսի հոգեր զինքը ճնշել կ'սպառնային, (Փիլ. Դ. 6) երբ կ'ըզձար որ եկեղեցիները զօրութիւնով հաստատուին ներսի մարդուն մէջ եւ Քրիստոս հաւատքով անոնց սրտերուն մէջ բնակի (Եփես. Դ. 14-18), երբ կ'ուզէր հակառակորդներէն ազատիլ եւ իր հեռակայ հոգեւոր զաւակներուն ու եղբայրներուն միանալ (Հռով. ԺԵ. 30, 31, Ա. 10, Ա. Թես. Գ 10), երբ Տէրը խօսքին յառաջանալուն ու փառաւորութեան նախանձախնդրութիւնը զինք կը բոցավառէր. (Բ. Թես. Դ. 1) եւն. եւն:

Կ'աղօթէր ծնրադիր (Դործ. Ի. 26), հոգիով ու մտառութեամբ (Ա. Կոր. ԺԴ. 15), սուրբ ձեռքեր վերցնելով ու առանց երկմտութեան (Ա. Տիմ. Բ. 8), զիշեր ու ցորեկ և աղերսագին (Ա. Թես. Դ. 10):

Կ'աղօթէր, քանի որ փորձով գտած էր թէ Աստուած կ'ազդուի աղօթքէն ու կը շարժէ բնութիւնն ու մարդիկը, կը բժշկէ հիւանդները (Դոր. ԻԸ, 8), կը բանայ դռներն ու սրտերը (Դործ. ԺԶ. 25-27) եւ կը լուծէ այնպիսի հարցեր որոնց լուծումը մարդկային միջոցներով անկարելի է:

Եւ գրեթէ միշտ ալ իր աղօթքին պատասխանը կուտար Աստուած, յաճախ դրական, սակայն երբեմն ալ բացասական: Օրինակ, նա ատեն մը երեք անգամ աղաչեց որ Տէրը վերցնէր իր մարմինին մէկ խայթոցը: Թէեւ Տէրը չվերցուց զայն, սակայն ցուցուց թէ Իր շնորհքը հերիք է՝ վասնզի Իր զօրութիւնը տկարութեան մէջ ի յայտ կուգայ: Եւ այդ բացասական պատասխանը լիովի գոհացուց Պօղոսը, քանզի նա տեսաւ թէ Աստուած աւելի պիտի փառաւորուէր իր խնդիրքին մերժուելովը քան թէ կատարուելովը: Ուստի սկսաւ պարծենալ նոյնիսկ տկարութիւններուն, իր անձնական փափաքին մերժուելուն վրայ (Բ. Կոր. ԺԲ. 7, 8):

Այս փորձառութիւններէն քաջաւերուած Պօղոս աղօթքով Ամենակարողին հովանաւորութեանը կը յանձնէր միշտ ինքզինքն ու եկեղեցիները, ասով կ'ազատէր ամէն հոգէ եւ կ'ապահովէր Անոր անզուգական խաղաղութիւնը, իմաստուն առաջնորդութիւնը եւ ամենաբաւ աջակցութիւնը՝ իր բոլոր միսիոնարական ձգտումներուն ու ցործերուն համար: Եւ ասով կրցաւ Քրիստոսի համար շատ աւելի հոգիներ շահիլ քան թէ իր քարոզներով ու խօսակցութեամբ:

Բայց Պօղոս ոչ թէ միայն ինքը կ'աղօթէր միսիոնարական գործին յաջողութեան համար, հապա կը յորդորէր որ եկեղեցիներն ալ աղօթէին: Ինքը, հաւատքի հերոսը, խոնարհաբար ա-

նոնց աղօթքը կը խնդրէր: Անոնք աղօթելու էին երբեմն միսիոնարական ընդհանուր գործին, երբեմն ալ շատ որոշ նիւթերու համար: Այսպէս, Հռովմայեցիները կը յորդորուին աղօթելու որպէսզի առաքեալը Հրէաստանի մէջ ազատի հաւատքի չհնազանդողներէն եւ անոր սպասաւորութիւնը ընդունելի ըլլայ սուրբերուն (Հոով. ԺԵ. 30, 31): Կողոսացիները աղօթելու էին որ Աստուած խօսքին դուռը բանայ՝ Քրիստոսի խորհուրդը խօսելու (Կող. Դ. 3):

Պողոս եղբայրներու աղօթքին կը դիմէ, քանզի նա փորձառաբար գիտէ նախ՝ թէ նորադարձ քրիստոնեաներու միամիտ եւ սրտաբուղիս աղօթքը ոյժ ունի՝ Աստուծոյ գահին առջեւ բարձրանալու եւ Անոր հզօր բազուկը միսիոնարական գործին համար շարժման մէջ դնելու: Այս իրողութեան իբր ապացոյց կրնայ ծառայել Քօրիայի մէջ վերջերս տեղի ունեցած արթնութիւնը, որ միայն այն ատեն սկսաւ, երբ բնիկ քրիստոնեաները միացած՝ աղօթեցին իրենց ժողովուրդի դարձին համար՝ թախանձագին եւ մանկական հաւատքով: Երկրորդ՝ Պողոս գիտէ նաեւ թէ հաւատացեալները իրենք անձամբ կ'օրհնուին ու հոգեւոր կեանքի մէջ կը խորունկնան, երբ կ'աղօթեն Աստուծոյ խօսքին տարածման համար: Ոեւէ թոյլ հաւատացեալ կամ եկեղեցի նոր կենսունակութիւն կը ստանայ, երբ կը սկսի աղօթել այս կամ այն միսիոնարական դաշտին կամ դործիչին համար, վասնզի ատով անիկա զուրս կուգայ իր սահմանափակ կեանքէն, բաց աչքերով կը տեսնէ Քրիստոսի փրկագործութեան վսեմ խորհուրդները եւ կը մղուի անձնուրացաբար գործակցիլ Անոր՝ ուրիշներու դարձին համար: Հին տնտեսութենէն օրինակ մը առնելով՝ կրնանք ըսել, ինչպէս Յոր բժշկուեցաւ երբ կ'աղօթէր իր բարեկամներուն համար (Յոր ԽԸ. 10), նոյնպէս ալ տկար քրիստոնեան կը զօրանայ, երբ աղօթէ անդարձ մեղաւորներուն եւ հեթանոսներուն համար:

Վերջացնենք այս հատուածն ալ կրկնելով թէ Պողոս յաջողեցաւ ամենաօրհնաբեր միսիոնարական գործը կատարել, վասնզի նախ ինք անձամբ աղօթքի թելով միացած էր աստուածային անսահման ուժի մարտկոցին, եւ երկրորդ գիտէր նաեւ իր հաւատացեալները մանկական ու սրտաբուղիս աղօթքի մղել: Իցի՛ւ թէ հիմա բոլոր միսիոնարներն ու հովիւները եւ մենք բոլոր քրիստոնեաներս լաւ սորվէինք այս դասը, իցի՛ւ թէ մեր կեանքն ալ անդադար աղօթքի կեանքն ըլլար: Իցի՛ւ թէ մենք ալ Պողոսի նման Աստուծոյ

գործին յառաջդիմութեան համար աղօթէինք եռանդով, հաւատքով եւ հնազանդութեան ոգիով: Այն ատեն Քրիստոսի խօսքը պիտի յառաջանար արծիւի թեւերով եւ շուտով պիտի գար Անոր փառաւորեալ թագաւորութիւնը:

5. Պողոսի անձնուրացումիւնն ու տառապելու յօժարամտութիւնը: Ասոնք ալ պակաս դեր չկատարեցին առաքեալին յաջողութեան մէջ: Ինչպէ՞ս կրնային զգացում ունեցող ու փնտռող հոգիները չազդուիլ այն մարդէն, որ թէեւ ամենէն ազատն էր, իր անձը ամենուն ծառայ կ'ընէր, ամենուն հետ ամէն բան կ'ըլլար որպէսզի մէկ քանիները ապրեցնէր, որ միւս չէր ուտեր եւ հաւատացեալ կնոջ մը սպասարկութիւնը կը մերժէր, որպէսզի իր եղբայրը չդալթակղեցնէր, եւ որ չարաչար կ'աշխատէր ու իր նիւթական պիտոյքները իր ձեռքերովը կը վաստկէր՝ աւետարանը ձրի տալու համար (Ա. Կոր. Ը. և Թ.): Ո՞վ կրնար դիմադրել հոգիներու փրկութեան համար ցաւ քաշող Աստուծոյ ծառային, որ գիշեր ու ցորեկ չէր դադարեր ամէն մէկ անձ առանձինն արցունքով խրատելէ (Գործ. Ի. 31) (1), որ կը յօժարէր յիմար, տկար, անարգ ու աշխարհի աղտեղութիւնը նկատուիլ՝ ուրիշները Քրիստոսով իմաստուն, զօրաւոր ու փառաւոր ընելու համար, որ կ'անօթենար, կը ծարաւէր ու մերկ կը մնար շատերը Յիսուսով հարստացնելու դիտումով (Ա. Կոր. Ե. 8-13) և որ կը բանտարկուէր, կը ծեծուէր կը ձաղկուէր, կը քարկոծուէր ու ինքզինքը մահուան վտանգին կ'ենթարկէր՝ իր Փրկչին ու հոգիներու սիրոյն համար (Բ. Կորնթ. ԺԱ. 24-29):

(1) Ատօյ՛թ Մօնօ Պօլոսի արցունքներուն վրայով հետեւեալը գրած է, «Ամենամեծ շնորհքը, ամենամեծ բարեացակամութիւնը զոր դուք կրնաք անոր ցուցնել, է Քրիստոսի դառնալ կամ Անոր ծառայել աւելի մեծ հաւատարմութեամբ: Դուք անոր կը զլանաք զայս, կը խուսափիք անոր աղերսանքէն, Թերեւս կը մերժէք զայն: Բայց ան կէ բոլորովին երես դարձնելէ առաջ՝ գէթ անգամ մը անոր նայեցէք... ան կուլա՛յ: Կուլայ մեղքին վրայ, որու մէջ դուք մնալ կը յամառիք. կուլայ չարիքին վրայ, զոր ձեր օրինակը կը պատճառէ եկեղեցւոյն. գայթակղութեան վրայ, զոր դուք աշխարհի կուտաք եւ ամենէն աւելի, կուլայ ապագային վրայ, զոր դուք կը պատրաստէք ձեզի համար: Առաքեալը ինկած է ձեր առջեւ, կը համարձաւ կիմ ըսել ձեր ոտքերուն քով, ի՞նչ կ'ըսէք ասոր: Աստուած, Որու ան կը ծառայէ, ատենօք ըսաւ անոր համար, «Ահա անիկա կ'աղօթէ» (Գործ. Թ. 11) եւ այդ մէկ խօսքին մէջ ամփոփեց ամէն ինչ որ առաքեալը պիտի ըլլար իրեն համար: Իսկ դուք. որոնց ան բարի լուրը կը բերէ, կրնաք սա մէկ խօսքով արտայայտել ամէն ինչ որ է ան ձեզի համար... ահա, ան կուլա՛յ»:

Այսպէս՝ համարձակօրէն կրնանք ըսել թէ առաքեալին կրած տառապանքը ամենէն ազդեցիկ միջոցներէն մին էր՝ փշրելու կարծր սրտերը եւ մարդիկը Քրիստոսի խաչին առջեւ խոնարհեցնելու: Եւ Պօղոս՝ քրիստոնէական եկեղեցւոյ ամենամեծ մարտիրոսներէն մին՝ կատարելապէս գիտակից էր այդ իրողութեան: Անիկա գիտէր թէ եկեղեցւոյ ամենն ու զօրացմանը համար անհրաժեշտ են այնպիսի անձեր, որոնք թէեւ յանցանք չունին, բայց սիրայօժար կը տառապին ընդհանուր մարդկութեան համար: Այո, անիկա նոյնիսկ կը խորհէր թէ ինք չարչարուելու էր՝ եկեղեցւոյն համար Քրիստոսի կրած նեղութիւններուն պակասը լեցնելու նպատակաւ (Կոր. Ա. 24): Ասով Պօղոս երբեք ըսել չուզեր թէ իր չարչարանքները փոխանորդական են: Քրիստոսի քաւական տառապանքները բաւական են բոլոր աշխարհը փրկելու համար, մարդոց կողմէ այդ մասին ըլլալիք ունէ բան պէտք չէ: Սակայն ուրիշ յանցանքին համար հարկ է որ անմեղ հաւատացեալն ալ անտրտունջ եւ ուրախ սրտով տառապի, որպէսզի մեղքին ուժը կտորի: Մեղքի գերութեան տակ հեծող մարդոց վրայ աւելի խորունկ ազդեցութիւն կը թողու՝ Աստուծոյ մէկ զաւկին անոնց համար սիրայօժար կրած չարչարանքները, քան թէ անոր քարոզներն ու նոյնիսկ զթութեան գործերը: Ուստի մեծ է այն քրիստոնեային կոչումը, որ իր Տէրոջ շաւղին եւ ձայնին հետեւելով, կրնայ չարչարուիլ ու մեղաւորներուն պատկերացնել Փրկչին սէրը եւ զանոնք Անոր առաջնորդել: Ահա, այս գիտակցութեամբ է որ Պօղոս կը պարծենայ իր նեղութիւններուն ու տառապանքներուն վրայ (Բ Կոր. ԺԲ. 10, Հոով. Ե. 3, Կոր. Ա. 24): Ո՞վ կրնայ համբել թիւը այն մարդոց, որոնց մէջ աւետարանին հնսզանդելու սէր արթնցաւ, երբ տեսան առաքեալին չարչարանքները Փիլ. Ա. 12-24:

Սակայն Պօղոս ուրիշ պատճառաւ մըն ալ կը հաւնի չարչարանքներու. անոնք անհրաժեշտ են որպէսզի ինքը աւելի խոնարհի ու Քրիստոսի շնորհքին ընդունակ ըլլայ (Բ. Կոր. ԺԲ. 7) եւ որպէսզի Աստուծոյ գերազանց զօրութիւնն ու Յիսուսի կեանքը իր մարմինին մէջ յայտնուի եւ իր ներսի մարդը օրէ օր նորոգուի (Բ. Կոր. Դ. 7, 10, 16): Եւ ո՞ր ճշմարիտ քրիստոնեան գոնէ փոքր չափով մը հաստատած չէ այս ճշմարտութիւնը նաեւ իր փորձառութեամբ: Ո՞վ տեսած չէ որ Փրկչին խաչին տակ կրուած չարչարանքները կը ծառայեն թէ՛ իր ներքին կեանքին խորացման եւ թէ՛ ուրիշներու դարձին:

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ ԿԵԱՆՔԷՆ

Բ. Քրիստոսի ժամանակակից վկայութիւններ:

Բոնը մարմին եղաւ ու մեր մէջ բնակեցաւ (եւ Անոր փառքը տեսանք՝ Հօրմէն միածնի փառքին պէս), շնորհքով ու ճշմարտութիւնով լեցուն:

Յովհ. Ա. 14

Հրեշտակներուն վկայութիւնը—Անիկա Փրկչին է, Օծեալ Տէրը Ղուկ. Բ. 11:

Երկինքէն եկած ձայնի մը վկայութիւնը—Ատիկա է Իմ սիրելի Որդիս, որու հաւներ եմ Մթ. ԺԷ. 5: Դուն ես Իմ սիրելի Որդիս Մարկ. Ա. 11:

Դիւահարներու վկայութիւնը—Անիկա Աստուծոյ Սուրբն է Մարկ. Ա. 24: Աստուծոյ Որդին է Մատ. Ը. 29: Քրիստոսը Աստուծոյ Որդին է Ղուկ. Դ. 42:

Մոգերուն վկայութիւնը—Հրեաներուն թագաւորն է Մատ Բ. 2:

Յովհաննէս Մկրտիչին վկայութիւնը—Աստուծոյ Դառը որ աշխարհի մեղքը կը վերցնէ Յովհ. Ա. 29: Փեսան է Յովհ. Գ. 29: Որդին է ՅՏ. Գ. 35:

Սամարացւոց վկայութիւնը—Ճշմարիտ աշխարհի Փրկիչն է Յովհ. Դ. 42:

Բեթանիացի Մարթային վկայութիւնը—Քրիստոսն է Աստուծոյ Որդին Յովհ. ԺԱ. 27:

Հովմայեցի հարիւրապետին վկայութիւնը—Իրաւցնէ Աստուծոյ Որդին է Ան Մարկ ԺԵ. 39:

Եթովպացի ներքինիին վկայութիւնը—Աստուծոյ Որդին է Գործ. Ը. 37:

Նաթանայէլի (Առաքեալ) վկայութիւնը—Աստուծոյ Որդին է, Իսրայէլի թագաւորը Յով. Ա. 50: Թովմասի (Առաքեալ) վկայութիւնը—Տէր եւ Աստուած է Յովհ. Ի. 28:

Յակոբոսի (Առաքեալ) վկայութիւնը—Մեր փառաց Տէրն է Յակ. Բ. 1:

Յուդայի (Առաքեալ) վկայութիւնը—Մեր միայն Իշխանը ու Տէրը Յուդ. 4:

Պետրոսի (Առաքեալ) վկայութիւնը—Անիկա Քրիստոսն է, կենդանի Աստուծոյ Որդին Մատ. ԺԶ. 16: Սուրբը եւ Որդին է Գործ. Գ. 14: Կենաց Առաջնորդը (Իշխան) է Գործ. Գ. 15: Աշխարհի սկիզբէն առաջ ճանչցուած անբիծ ու անարատ Գառն է Ա. Պետ. Ա. 19: Մարդոցմէ անարգուած բայց Աստուծմէ ընտրուած ու պատուական Կենդանի Վէմն է Ա. Պետ. Բ. 4: Ընտիր պատուական Անկիւնի Վէմն է Ա. Պետ. Բ. 6: Մեր հոգիներուն Հովին ու Տեսուչն է, Ա. Պետ. Բ. 25:

Յովհաննէս Առաքեալի վկայութիւնը—Անիկա Բանն է (Աստուծոյ խօսքը) Յայտ. ԺԺ. 13. Յով. Ա. 1: Ճշմարիտ Լոյսն է Յովհ. Ա. 9: Մարմին ե-

զած Բանն է Յովհ. Ա. 14: Աստուծոյ Որդին է Ա. Յովհ. Ա. 3, 7: Հօրմէն Միածին Որդին է Յովհ. Ա. 14: Քրիստոսն է, Աստուծոյ Որդին Յովհ. Ի. 31: Հօրը քով մեր Բարեխօսն է Ա. Յովհ. Բ. 1: Մեր մեղքերուն քաւութիւնն է Ա. Յովհ. Դ. 10: Աշխարհի Փրկիչն է Ա. Յովհ. Դ. 14: Ճշմարիտ Աստուած Ա. Յովհ. Ե. 20: Յաւիտենական կեանք Ա. Յովհ. Ե. 20: Հաւատարիմ Վկան է Յայտ. Ա. 5: Երկրի թագաւորներուն Իշխանը Յայտ. Ա. 5: Մեռելներուն Անդրանիկը Յայտ. Ա. 5: Աւֆան և Օմեղան է Յայտ. Ա. 8, 21: Առաջինը և Վերջինը Յայտ. Ա. 7: Յաւիտեանս յաւիտենից կենդանի եղողն է Յայտ. Ա. 18: Հաւատարիմը ու Ճշմարիտն է Յայտ. ԺԹ. 11: Առաւօտեան պայծառ Աստղն է Յայտ. ԻԲ. 16: Թագաւոր թագաւորաց եւ Տէր տերանց Յայտ ԺԹ. 16:

(Շար.)

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՅՐԵՏԵՐԻՔ ՕՊԸՐԼԻՆ

ԻՐ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԸ

Իր ընտանեկան խաղաղ մթնոլորտին մէջ լուսապայծառ կը յայտնուէր՝ իր բարեպաշտութեան լիութիւնն ու մաքրութիւնը: Իր աստուածավախ կնոջ՝ Մակտալենայի հետ մէկ սիրտ մէկ հոգի էր: Աստուած օրհնեց երջանիկ ամուսնութիւնը ինը զաւակներով: Օպըրլինեան ամուլի փափուկ խնամածութեան առարկայ էին ոչ թէ միայն իրենց զաւակները, հապա նաեւ աշակերտները եւ սպասաւոր ու սպասուհիները: Ասոնք ալ ընտանիքի անդամ կը նկատուէին, եւ սեղանակից էին պատուելիին ուստի կապուած էին իրենց տէրոջն ու տիրուհոյն՝ սիրով ու յարգանքով:

Օպըրլին՝ իր ամուսնութեան առաջին տարիէն ի վեր՝ զարմանալի ու տխուր կանխազգացում մը ունէր թէ շուտ պիտի կորսնցնէր իր սիրեցեալ ընկերուհին, ուստի յաճախ իր սիրտը կը ճնշուէր խոր վիշտով մը: Այս գուշակութիւնը դժբաղդարար շուտով իրականացաւ: 1783 Յունվ. 17ին Աստուծոյ հաճոյ թուեցաւ թանկարժէք երէցկիւնը յանկարծ իր յաւիտենական բնակարաններուն մէջ ընդունիլ: Նախընթաց իրիկունը, մինչ Օպըրլին իր կնոջ հետ առանձինն էր և մահուան ունէ նշան չկար, տիկինը իր ամուսնոյն ըսաւ, «Տէրը, իմ Աստուածս, ինծի տուած խօսքը կատարեց քու միջոցաւ, իմ սիրելի այրս: Ան խոս-

տացած էր՝ ինծի Իր փրկութիւնը ցուցնել եւ իրաւամբ ես զԱյն գտայ քու միջոցաւ. քեզի կը պարտիմ այն ծանօթութիւնները զորս ես ունիմ երկինքի եւ մահէն ետք գալիք բոլոր բաներու շուրջ: Շնորհակալ եմ քեզմէ, սիրելի այրս, եւ քեզմով գիտակից եմ իմ սիրելի Աստուծոյ հաւատարմութեանը»: Այս խօսքերուն վրայ ժամը տասը զարկաւ: Այր ու կին համբուրուեցան եւ մէկ մէկու գիշեր բարի ըսին: Տիկինը գնաց իր ննջասենեակը՝ իր ամենափոքր զաւակին քով, որ դեռ հազիւ ութը շաբթուան կար: Սպասուհին աւանդաբար եղաւ թէ ինչպէս երէցկիւնը անկողին մտնելէ առաջ գնաց նաեւ իր միւս բոլոր զաւակներուն քով եւ զատ զատ իւրաքանչիւրին գլխուն վրայ դրաւ իր ձեռքը: Առտուան ժամը վեցի ատենները՝ սպասուհին, Լիւզը Շէփլըր, վազեց Օպըրլինի քով եւ զայն արթնցուց ըսելով, «Պարոն, տիկինը շատ հիւանդ է»: Օպըրլին ահապարանօք ցատկեց անկողնէն. երբ կնոջ սենեակը մտաւ, լսեց սա խօսքերը, «Տէր Յիսուս, ազատէ զիս այս սոսկալի ցուէն»: Մօտեցաւ ներս եւ երբ զայն գրկեց, զգաց ներս սրտի սոսկալի տրոփումը: Քիչ յետոյ կինը մեռած էր: Օպըրլին մի քանի վայրկեան ծնրադրած մնաց խոր լռութեան մէջ. ի վիճակի չէր բնաւ իր զգացումները արտայայտելու: Ետքը հառաչանքով ըսաւ, «Այս, Աստուած իմ, ի՞նչ ըրիր, Դուն իմ կինս խլեցիր ինձմէ եւ ես Քեզ ատոր համար ալ գովելու եմ»: Ծոռեցաւ հանգուցեալին վրայ, համբուրեց անոր բերանը եւ թրջեց զայն իր արցունքներով: Իր վիշտը այնքան խոր էր որ անդադար Աստուծոյ կ'աղերսէր՝ իր հոգին ալ առնել:

Իր կնոջ կորուստէն ի վեր, Օպըրլին խորունկ կարօտ մը ունէր դէպի իր երկնային հայրենիքը եւ ինքզինքը կը մխիթարէր իր բարեկամին՝ Եունիկ Ըշթիլինկի սա խօսքովը, «Երանի անոնց որ հայրենիքի կարօտ կը քաշեն, քանզի տուն պիտի հասնին»: Յաճախ անիկա կ'ըսէր, «Կը յուսամ թէ շուտով պիտի բացուի ինծի այն աշխարհը, ուր Աստուած զիս պիտի միացնէ իմ սիրելի կնոջս»:

1817ին Օպըրլինի սիրտը խոցուեցաւ ուրիշ կորուստով մըն ալ. այդ թուականին մեռաւ իր որդին Հանրի, շատ կարող ու բարեպաշտ աստուածաբան մը: Հանգուցեալին վերջին խօսքը եղաւ, «Մահէն դէպի կեանք»:

Սակայն այս ընտանեկան դժբաղդ պատահարներու ատեն ալ աստուածային մխիթարութիւնն ու խաղաղութիւնը Օպըրլինի հետ էին:

Անիկա այս բոլոր վիշտերուն կը տոկար, քանզի անտեսանելի աշխարհը անոր այնքան իրական ու ծանօթ էր, որքան տեսանելին: Աչքերը յաւիտենականութեան ուղղած՝ կ'ապրէր ու կը գործէր երկրի վրայ: Ուստի Աստուած ալ մեծ օրհնութիւն ըրաւ զինքը շատերու համար: Իր արդիւնաւէտ գործունէութիւնը զարմանքի առարկայ դարձաւ ոչ թէ միայն իր պաշտօնատեղիին հապա նաեւ ամբողջ Ֆրանսայի, Գերմանիոյ, Զուիցերիոյ, Անգլիոյ եւ նոյնիսկ Ռուսիոյ մէջ: Երբ 1813ին Նաբոլիոնեան պատերազմներու ատեն դաշնակից բանակները գէպի Ֆրանսա կ'արշաւէին, Ռուսիոյ Ալեքսանդր Ս. Չարը հրամայեց բոլոր բանակներու որ խնայեն Օպերլինի տանը եւ սեւէ փսա չպատճառեն անոր մարդոց, եւ 1818ին, երբ նոյն Չարը Ֆրանսֆօրթ կը զըտնուէր, անկէ խնդրեց Օպերլինի նախկին աշակերտներէն մին, Ալգասցի ազնուական մը, որ Ռուսական ծառայութեան մէջ կը գտնուէր, որ պէսզի իրեն արձակուրդ մը տար՝ Շթայնթալ երթալու եւ Օպերլին հայրիկին իր յարգանքները մատուցանելու, Ազնուականը այդ առթիւ ըսաւ, «Ձեր վեհափառութիւնը զբաւուած է սա ճշմարտութեամբ թէ քաղաքակրթութեան հիմը դրուած է աւետարանի անկիւնաքարին վրայ: Արդ, այդ նոյն բանն է, զոր ըրած է այս ազնիւ մարդը իր թեմին մէջ: Անիկա մտքի կրթութիւնն ու սրտի դաստիարակութիւնը հաստատեց Յիսուս Քրիստոսի կրօնին վրայ»: Չարը պատասխանեց, «Պարոն, Օպերլինը ինծի ծանօթ է, ես գիտեմ որ ան Տէրոջը մէկ հաւատարիմ ծառան է: Ըսէք իրեն թէ ես կը սիրեմ ու կը յարգեմ զինքը եւ կը յանձնեմ ինքզինքս իր աղօթքներուն:

ՕՊԵՐԼԻՆԻ ՄԱՆԸ

Ան ծառայեց Տէրոջը գործին մէջ աւելի քան 50 տարիներ՝ լուրջ, հաւատարիմ ու եռանդուն ոգիով: Ուստի այլեւս ուժասպառ էր. իր աչքերուն լոյսը այլեւս զրեթէ բսլորովին խաւարած էր: Իր մազերը ձիւնապիտակ եւ ոյժը հատած: Այսու ամենայնիւ դեռ իր կեանքին վերջին օրերուն կրնար երիտասարդներուն հետ կատակել ու ըսել, «Եկէք, ես ձեզի ցուցնել կ'ուզեմ թէ ինչպէս կը քալեն զինուորները»: Եւ իր տան անդամներուն ալ սովոր էր ըսել, «Մի ծերանաք, տեսէք, ես այլեւս բանի չեմ գար, չեմ տեսներ, չեմ լսեր: Ես ալ երիտասարդ եղած եմ, եւ ինչպիսի՜ գորութիւն ու կենսունակութիւն ունէի: Ինչ մնացած է այժմ գորաւոր ձրիցէն: Հազիւ

կրնայ շարժիլ: Բայց սիրելիներ, կը խորհի՞ք թէ ես ատոր համար կը տրտնջեմ: Ա՛խ, ո՛չ, ո՛չ: Բարին Աստուած շատ աւելի իմաստուն է քան թէ ձեր ձրիցը: Իր քով կանչելու յարմար ժամանակը արդէն Անիկա գիտէ»:

Եւ այդ ժամանակը երկար չուշացաւ: Կիրակի օր մը, Մայիս 28, 1826ին ունեցաւ զօրաւոր տենդ մը, որուն կ'ընկերանար մթազնում իմացականութեան: Հետեւեալ օրը հազիւ կրցաւ իրեններուն ըսել կէս առ կէս հասկնալի մի քանի բառեր: Յաճախ իմանալի էր սա աղօթքը, «Տէր Յիսուս, շուտով հանգստեան կոչէ, շուտով վերջ տուր, ես կ'աղերսեմ Քեզի, վերջ թող գտնեն իմ տաժանքներս: Բայց Քու կամքդ թող ըլլայ»: Չորեքշաբթիէն Հինգշաբթի լոյս գիշերը զրեթէ միշտ անգիտակից էր, բայց իր բերանէն աւաժայ դուրս թռած աղաղակները կը ցուցնէին թէ ցաւը սաստիկ էր: Երբ ցաւերը կը մեղմանային ու իր գիտակցութիւնը դարձեալ վրան կուգար, կը բռնէր իր մօտ գտնուած սիրելիներէն միոյն կամ միւսին ձեռքը ու կը սեղմէր իր կուրծքին: Աս կը ցուցնէր թէ ան որքան մեծ սիրով կապուած էր իրեններուն: Հինգշաբթի առտուն յանկարծ բացաւ իր գլուխը, գոցեց իր ձեռքերը եւ նայեցաւ դէպի երկինք: Բերանը չէր կրնար խօսիլ, բայց աղօթող աչքերը իրենց մէջ ունէին բան մը երկնաւոր երանութենէն ու սէրէն: Քիչ ետք զոցուեցան իր աչքերը եւ վերջացաւ վերջին կըռիւր: 1826 Յունիս մէկին Շթայնթալը կորսնցուցած էր իր հայրն ու բարեկամը: Բոլոր տուններու մէջ մարդ կրնար լսել սուգի խօսքեր եւ տեսնել լացող աչքեր:

Թաղումը տեղի ունեցաւ Յունիս 5ին: Ներկայ էր մեծ բազմութիւն մը՝ բաղկացած ամէն դասակարգի ու յարանուանութեան մարդոցմէ: Շթայնթալի բոլոր եկեղեցիներէն կը ղօղանջէին զանգակները: Դազաղը շալկած էին քաղաքապետը եւ հոգաբարձուները: Յուդարկաւորներու թափորը աւելի քան երկու քիլօմէթր տեղ կը գրաւէր: Ամէն մարդ իր գործը ձգած էր՝ այս Աստուծոյ մարդուն իր վերջին յարգանքը մատուցանելու, նոյնիսկ կաթողիկոսներ խոնուած էին փողոցները եւ կը ծնրադրէին ու կ'աղօթէին երբ դազաղը իրենց քովէն կ'անցնէր: Գերեզմանատան մէջ շատեր խօսեցան, նոյնիսկ կաթողիկ բժիշկ մը և յուզիչ խօսքերով երեւան հանեցին մեծ մարդուն մատուցած ծառայութիւնները:

Այս պարագան անգամ մըն ալ կը շեշտէ թէ սէրը ո՛չ դասակարգ եւ ոչ ալ յարանուանութիւն կը ճանչնայ: Ով որ Աստուծոյ սէրէն դրդեալ կը

սիրէ մարդիկ եւ կը ծառայէ անոնց, կը գնահատուի ու կը սիրուի ամէն խոհուն անձէ: Յարգանք Օպերլիին սիրոյն եւ փառք ու պատիւ մեր Փրկչին որ կրցաւ հոգեղէն անօթ մը այնքան ընտիր գործիքի մը վերածել:

ՎԵՐՋ

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ՏՈՒՆ Կ'ԵՐԹԱՅ

(Հետեւեալ պատմութիւնը առնուած է «Յաւիտենական Լոյսը» կոչուած գրքոյկէն)

Նշանաւոր վիրաբոյժի մը բուժարանին (քիւնիկին) մէջ, կ'աշխատէր հիւանդապահուհի մը: Հազարովէ կ'ործէր զինքը անընդհատ զբաղման մէջ կը պահէին: Օրուան մէջ հազիւ քանի մը վայրկեան կրնար հանգստանալ:

Որքա՛ն աղերսարկու էր նայուածքը կիներուն, որոնք իրենց տառապող ամուսիններուն կամ զաւակներուն կ'ընկերանային: Իրեն ուղղուած այդ թախծալից ակնարկներուն իր պատասխանն էր անձնուէր հաւատարմութիւնը որով նա կը ծառայէր դժբաղդներուն:

Անիկա տեսած էր հարիւրաւոր հիւանդներու գալը՝ դէպի գործողութեան սեղան. անոնց մեծամասնութիւնը ազատուած էր եւ ուրախութեամբ տուն վերադարձած. շատեր ստիպուած էին ատկէ ետքն ալ տառապիլ, ոմանք նոյնիսկ մեռած էին, քանզի անոնց սիրտերը չէին տոկացած գործողութեան տուայտանքին:

Հիւանդապահուհին տեսած էր պատանիներ ու ծերեր իրենց մարմնաւոր չարչարանքին ու հոգեկան ամենախորին տուայտանքին մէջ: Տեսած էր այլազան դասակարգերու եւ դաւանանքներու պատկանող մարդիկ ու դիտած էր թէ ինչպէս անոնց իւրաքանչիւրը կը նախապատրաստուի իր վերջին եւ վճռական քայլն առնելու:

Բոլոր կարեւոր դէպքերուն մէջ հետեւեալը անոր սիրտը ամենէն շատ յուզած էր:

Անգամ մը մայր մը բերած էր իր հիւանդ զաւակը, հրապուրիչ մանուկ մը, խոշոր ու պայծառ աչքերով: Դժբա՛ղդ մայր: Զոհուելու տարուած դառնուկի մը նման պառկած էր իր զաւակը գործողութեան սեղանին վրայ: Բժիշկը կը շօշափէր մանկան փափուկ մարմինը, զոր մայրը իր զգուշից ձեռքէն գատ ուրիշի մը վստահիլ չէր սիրեր: Յայտնի էր որ իր մայրական ըզ-

գայուն սիրտը այդ քննութեան ատեն կը տառապէր, բայց եւ այնպէս անիկա կը զսպէր ինքզինքը եւ կը պահէր իր հանդարտութիւնը: Կարծես թէ բժիշկը իրմէն աւելի այլալիւծ էր երբ նա քննութենէն ետքը ըսաւ, «Իմ վախցածիս պէս է, անբնականոն դէպք մըն է, բոլորովին անյո՛յս: Դործողութիւնը ութը օրէն աւելի չենք կրնար յետաձգել, վասնզի այդքան փոքր մանուկ մը չկրնար դիմանալ այն տանջանքներուն, որոնք իրեն կը սպասեն: Բայց ան չկրնար ազատիլ նաեւ գործողութեան միջոցաւ, անկէ քիչ յետոյ պիտի մեռնի:

Այս խօսքերուն վրայ մօրը դէմքը աւելի տգտունեցաւ, սակայն նա պահեց իր խաղաղութիւնը. բժիշկը վկայեց թէ ինքը դեռ տեսած չէր այդքան դիցազնական կորով, որքան այդ փափուկ կնոջ դէմքին վրայ:

Այս քննութենէն յետոյ մանուկը դարձեալ իր սենեակը տարուեցաւ եւ դրուեցաւ իր ճերմակ անկողնոյն մէջ: Մայրը հետեւեցաւ, ծնրադրեց անոր մահիճին քովը, թաղեց իր գլուխը անոր բարձիկին մէջ եւ սկսաւ լալ ու արտասուել, սակայն այնքան լռիկ որ փոքրիկը երբեք չկրցաւ նշմարել:

Նէ ատենօք Տէրոջմէն ընդունած էր իր այդ մէկ հատիկ հոգեհատորը, եւ հիմա պատրաստուելու էր զայն դարձեալ Անոր բազուկներուն յանձնել:

Բայց որքա՛ն ամալի ու չոր կը թուէր ապագայ կեանքը առանց իր սիրոյ ու գուրգուրանքի առարկային: Ուստի նա աղօթեց, «Տէր, ինծի ոյժ տուր խոնարհելու քու կամքիդ առջեւ, ինծի ոյժ տուր պատիկիս վերջին ճամբորդութիւնը դիւրացնելու»: Ան դեռ շատ բան ունէր իր Տէրոջը առջեւ բերելու, սակայն փոքրիկը իր սիրուն աչքերը բանալով, «Մայրի՛կ», գոչեց և վեր բարձրացուց իր խարտիշահեր գլուխը: Բայց մայրը պատրաստուած էր աղօթքով իր վերջին ու ամենածանր մայրական գործին. իսկոյն սրբեց իր արտասուքի վերջին կաթիլները և կսկիծին յաղթելով ակամայ ժպիտով մը նայեցաւ իր փոքրիկին: Մօրը ու զաւակին միջեւ սկսաւ հետեւեալ խօսակցութիւնը:

—Մայրիկ, չեմ գիտեր ինծի ինչ եղաւ, քնացայ, բայց շիտակ քուն չէր. բոլորովին տարբեր բան մըն էր:

—Սիրունս, գիտե՞ս քեզի ինչ պիտի պատմեմ, շա՛տ, շա՛տ աղուոր բան մը: Ի՞նչ պիտի ըսէիր եթէ հիմա ամառուան մէջ Ծնունդը գար:

—Այդպէս բան մը կրնա՞յ ըլլալ մայրիկ:

—Ոչ, բայց դուք ատկէ շատ աւելի գեղեցիկ բան մը պիտի տեսնես, ես քեզի համար ատկէ շատ աւելի անակնկալ մը ունիմ:

—Մայրիկ, շուտով ըսէ՛ ի՞նչ է այդ:

Մայրը լռեց ակնթարթ մը, իր ուժէն վեր էր այդ գաղտնիքը բանալ իր գաւկին առջեւ: Այո, սակայն նա ունէր Զօրավիգ մը որուն կը կոթնէր: Ուստի անհամբեր պատասխանի սպասող իր փոքրիկին ըսաւ,

—Սիրունիկս, խորհիր մէյ մը թէ Յիսուս լուր դրկած է թէ դուն հրաման ունիս երկինքը իր քով երթալու: Դուն գիտես արդէն որ հոն միշտ Ծնունդ կը պօնուի, եւ շատ աւելի գեղեցիկ է քան հոս:

—Մայրիկ, այն ատեն սիրելի Փրկիչն ալ պիտի տեսնեմ, այնպէս չէ՞, նաեւ հրեշտակները:

—Այո հոգիս, թերեւս ութը օր ետքը:

—Մայրիկ, եթէ ես արթննայի ու քեզի այդպիսի բան մը պատմէի եւ դուն պատասխանէիր թէ ես միայն երազած եմ, այն ատեն այս գէշ պատմութիւն մը եղած պիտի ըլլար: Բայց հիմա ինչ որ դուն պատմեցիր, երազ չէ, իրական պատմութիւն է, այնպէս չէ՞ մայրիկ:

Պզտիկը չնշմարեց թէ մօրը ձայնը ինչպէս դողդղաց, մինչ նա պատասխանեց, «Այո զաւակ» շիտակ պատմութիւն է»: Մայրը խաբուած չէր: Կարճ ժամանակի մը մէջ իր զաւակը երկնային կեանքին այնքան լաւ ընտանեցած էր, մանուկներու ամենաընտիր Բարեկամին այնքան մտերմացած, որ այժմ պզտիկին ամենէն մեծ բաղձանքն էր Աստուծոյ քով երթալ: Մայրիկ, միայն եօթը կամ ութը անգամ քնանալ եւ ապա երկինք երթալ, այնպէս չէ՞:

Վիշտէն մօրը սիրտը խոցուեցաւ: Սակայն փոքրիկը մանկական քաղցրահնչիւն ու զուարթ խնդուք մը արձակեց:

Այդ միջոցին ներս մտաւ հիւանդապահուհին եւ ըսաւ, «Սքանչելի է որ հոս այսքան զուարթ էք ու կը խնդաք»: Անիկա ինքնիրենը կը խորհէր թէ մանուկը չէր գիտեր թէ մահը այնքան մօտ էր իրեն: Բայց ան շուտով հասկեցաւ որ բոլորովին հակառակն էր, վասնզի մանուկը ըսաւ, «Դիտե՛ս օրիորդ, ալ քիչ ետք սիրելի Յիսուսին քով պիտի ըլլամ», եւ դարձեալ սենեակը լեցուեցաւ անոր մանկական հնչեղ խնդուքով: Հիւանդապահուհին այլեւս որեւէ խօսք չէր կրնար ըսել: Մանկան խնդուքը եւ տփռոյն մօրը հերոսական արտայայտութիւնը յուզեցին զինքը խորէն, նա անմիջապէս սենեակէն դուրս ելաւ եւ ըսաւ իր մտքէն, «Տարբեր մարդիկ են ասոնք, քը-

րիստոնեաները՝ երջանիկ ու կորովի: Աւա՛ղ, որ չենք կրնար ազատել այս կնոջ զաւակը»:

—Մայր, դո՛ւն ալ ինծի հետ պիտի գաս: Ծիշդ այս հարցումէն վախցած էր մայրը: Աւա՛ղ որ չէր կրնար «Այո» պատասխանել: Փորձեց խնդալ, եւ ապա ըսաւ, «Քիչ յետոյ, հոգի՛ս, եւ այս աւելի լաւ է, այն ատեն դուն դրան քովը զիս կը դիմաւորես եւ ամէն բան ինծի կը ցուցնես»...

Մայրը փոքր մահիճին քովէն երբեք չհեռացաւ: Հիւանդ մանկիկը կը փափաքէր որ իրեն կրկին ու կրկին երկինքի վրայով պատմուի: Մայրը պատմեց եւ Տէրը զինք զօրացուց:

Մանկան վերջին հարցումը եղաւ, «Հիմա՞, մայր»:

—Այո, զաւակս, Յիսուս շուտով պիտի գայ, պատասխանեց նա վշտալից սրտով: Մինչ մանուկը իրիկունը դադաղին մէջ կը փաթթուէր, անոր ցուրտ ու զոնաւատ դէմքին վերայ դեռ նշմարելի էր ուրախ ժպիտի մը հետքը: Իսկ որդեկորոյս մօրը վրայ յարձակեցաւ երկար ատենէ ի վեր զսպուած վիշտը: Սակայն նա ատկէ ետքն ալ շարունակեց իր ամայի ձամբան՝ առանց ընկճուելու՝ վասնզի գիտէր թէ ո՛վ կ'ընկերանար իրեն, մինչեւ այն դուռը, ուրկէ իր հոգեհատորը ներս մտած էր:

ՍՈՒՐԲ ԾԱՐԱԽ

Ինչպէս եղջերուն ջուրի վտակներուն կը փափաքի, այնպէս ալ իմ անձս՝ Քեզի կը փափաքի, ով Աստուած: Հոգիս ծարուի է Աստուծոյ...

Սաղ. ԽԲ. 1

Զիս քաշէ՛, Քու ետեւէդ պիտի վազենք...

Երգ. Ա. 4

Տիեզերքի անսահման անեղբայրներ լեցնող Ով պաշտելի Սէր-Յիսուս, գրեթէ վայել կը ցանկամ: Եւ ինչպէս ջուրն՝ եղջերոյն, Թիթեռին՝ յոյն առլինքնող, Ծաղկին՝ արեւն, ու քնքուշ մանկան՝ իր մայրն սիրական, Յիսուս, Դուն ալ ինձ համար եղբի նոյն տարրն կենսական: Դարձիր զօրեղ, ներազդու, եւ ակներեւ, եւ փայլուն. եւ օր քան զօր Տէր, կեանքի սա՛ իրերէն մոգական, Շատ աւելի զգլխիդ դարձիր հմայք մը անհուն...

Օ՛հ, սիրող պինդ ոսկելար կապով միշտ դէպի վեր՝ Մաքնիսացուր զիս, քաշէ, եւ ետեւէդ պիտի վազեմ: Հրատուր ծարաւ եմ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆԴ գերիվեր, Պարարէ զիս ով Յիսուս, ՄՏԵՐՄՈՒԹԵԱՄԲԴ վսեմ...

ՍԱՄՈՒԷԼ Պ.

(ՓԱՐԻԶ 1929)



ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Ի՞նչ պէս մեծ անձկութիւն պիտի ըլլայ այն օրը.— Վերջին լուրերու համաձայն քանի մը շաբաթ առաջ առաջին անգամ ըլլալով, քաղաքէս մեկնող նաւ մը, ճօրճ Ֆիլիփուր, այրած է Ատէնի ծովածոցին բացերը: Նաւին ճամբորդներէն մեծագոյնը եւ գործաւորներէն մաս մը, ազատած են կարգ մը օգնութեան հասնող նաւերու միջոցաւ:

Մեր ընդունած հատակտոր լուրերը կարգ մը աղեխարշ դէպքեր կը պարունակեն: Այս օրուան թերթերուն մէջ հետեւեալը կը կարգաւք որ տեղի ունեցած է Բարիզի մէջ այդ առթիւ: Առաւօտէն սկսեալ մարդիկ նաւային ընկերութեան շէնքին առջեւ կայնած հեռագրի մը կ'սպասեն, որ պիտի հաստատէ ողջութեան լուրը իրենց սիրելիներուն, որոնք նաւին վրայ կը գտնուէին: Կը տեսնուին անձկալից կիներ, որոնք իրենց տրուած տոմսակներուն վրայ դողդղացող ձեռքերով կը գրեն այն անձին անունը, որու մասին կը յուսան թէ լուր մը պիտի ընդունին: Անուան առջեւ կը տեսնուի... ամուսինս, ...որդիս, ...եղբայրս եւն: Սեւ հագուստներ հագուած եւ խոր սուգի քօղը դեռ գլխին՝ կին մը լուրթեամբ դառն արցունքներ կը թափէ: Դեռ նոր սիրելիներէն մին հողին յանձնած է, կ'սպասէ թերեւս ուրիշ աւելի ծանր մահազգի մըն ալ:

Յանկարծ կին մը զրասենեակէն դուրս կը ցատկէ խելայեղ ուրախութեամբ աղաղակելով... Կ'ապրի՛, կ'ապրի, ու կը խառնուի ժողովուրդին: Օրուան հեռագիրներուն վերջին անուանացանկն է որ կը փակցուի զրասենեակներէն մէկուն մեծ ապակեփեղկին վրայ: Բազմութիւնը գիրար հըրմշտակէն կը մօտենայ արագ ակնարկով մը լափելու գրուած անունները, մի գուցէ գտնէ իրեն սիրելի մէկ անունը, եւ ահա կ'նշական սուր ճիչ մը,

Փափ'ան... փափան...

Ո՛ւր է, ո՛ւր է, կ'աղաղակէ արական ձայն մը: Հոն, վարը նայէ. վերջընթեր անունը: Մէկ ակնթարթ յետոյ եղբայր եւ քոյր գիրար կ'ողջապուրեն եւ բարի լուրը իրենց մայրիկին կը փութացնեն: Ժամերը անձկութեամբ կ'անցնին...

Ո՛հ, ի՞նչ մանրանկար մըն է այս այն մեծ ժամանակին երբ մեր Տէրը պիտի գայ եւ Իր գաւակները աշխարհէ բաժնէ: Այն ատեն քանինե՛ր այդպէս անուանացանկերու առջեւ պիտի կայնին եւ աշխարհէ բաժնուող իրենց սիրելիներուն անունները փնտռեն եւ երբեք չպիտի գտնեն: Ո՛հ ի՞նչ անձկութիւն, ի՞նչ անձկութիւն:

Իսկ վերը հասնելով իրենց Փրկչին դէմքը տեսնելէ յետոյ, իրենց բոլորտիքը նայող եւ իրենց սիրելիները փնտռողներուն տրտմութիւնն ալ նկատի առնենք, երբ անոնք չգտնեն իրենց ակնկալած անձնաւորութիւնները այն խումբին մէջ: Սիրելի ընթերցող, արդեօք դուն ալ այն խումբին մէջ պիտի ըլլա՞ս, կամ հոս մնալով թէ՛ անձկութեան մէջ պիտի տապնապիս եւ թէ՛ վերը քու սիրելիներդ քեզի համար պիտի տրտմեցնես: Ժամանակը սուղ է, ժամանակը լուրջ է: Առաւօտը կուգայ ու նաեւ գիշերը:

.....

Քրիստոսի հոգիին արտայայտութիւնը.— Ծառնօթ ճաբոն աւետարանիչ Քակաւա ճաբոնի բոլոր քրիստոնեայ համայնքներու կողմէ հետեւալ նամակը կը գրէ Ձին քրիստոնեաներու Ձին եւ ճաբոն տապնապին առթիւ:

«Սիրելի եղբայրներ եւ քոյրեր. Այսու կուգամ ներողութիւն խնդրել ձեզմէ իմ հայրենիքիս համար: Կ'ուզեմ ձեզի դիտել տալ թէ մեզմէ շատեր որոնք քրիստոնեայ են, դիտողութիւններ բարձրացուցինք ընդդէմ զօրախումբերու յուղարկման դէպի ձեր նահանգները:

Ներեցէք նաեւ մեզի, ներեցէք մասնաւորապէս ինծի որ մեր քրիստոնեաներուս զօրութիւնը Հի բաւեց այս ընդդիմութիւնը յաղթական կերպով ի գլուխ հանելու հանդէպ մեր զինուորականութեանը: Բայց ատենը պիտի գայ, երբ մենք բաւականաչափ պիտի զօրանանք այդպէս ընելու, որ ատեն մեր երկու ազգերը ներդաշնակ խաղաղութեամբ պիտի ապրինք Քրիստոսի անունով»: Այս նամակը ճաբոն ազգային շրջանակներու մէջ մեծ յուզում երեւան բերաւ, եւ յայտարարութիւններ հրատարակուեցան հետեւեալ վերտառութեամբ, «Սպաննեցէք Քակաւան, անիկա հայրենադաւ մըն է»:

Երանի՛ թէ մեծ պատերազմին եւ ուրիշ պատերազմներու եւ տապնապներու առթիւ քրիստոնեաները այսպիսի դիրքեր բռնեն.— թէ որ արժան է Աստուծոյ աւելի մարդոց հնազանդիլ, դուք դատեցէք:

Յամենայն դէպս ճաբոն եւ Ձին քրիստոնեաները այդ երկու երկիրներուն միջեւ ծագած տապնապին մէջ բնաւ ձեռնմուխ եղած չեն եւ հակառակն ալ արտայայտուած են: Ուր որ Քրիստոսի հոգին կայ, հոն ազատութիւն կայ. ազատութիւն նաեւ ազգային ռիսակալութենէ եւ ազան աշխարհակալութենէ:

Rédaction du «PANPÈRE»

7, Rue Papère - MARSEILLE (France)

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Imp. Y. ARMEN, 39, Rue St.-Savournin - Marseille